

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏԵՆԻ ԸՆԴՈՒՆԵՅՑ ՓԱՔԻՍՏԱՆԻ ԴԵՍԿԱՆԻՆ ՀԱԻՏԱՐՄԱԳԻՐԸ



Սուրիոյ Նախագահ Պաշտարալ-Ասատ ընդունեց Սուրիոյ մէջ Փաքիստանի Իսլամական Հանրապետութեան Նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Շահետ Ախտարի հաւատարմագիրը, ներկայութեամբ՝ Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատի եւ Սուրիոյ նախագահական հարցերու նախարար Մանսուր Ազգամի:

ՐԷԻՍԵԱՆ. «ՊԱՀԱՆՁՍ Է ԶԲԱԽԱՐԱՐՈՒԻ ԴԱՏԱԴԱՐՏՈՒՄԻ ԽՕՍՔԵՐՈՎ, ԱՅԼ ԹՐՔԱԿԱՆ ՈՏՆՉՓՈԻԹԻՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԿՈՉ ՈՒՂՂԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ»

Սուրիական Աղէքսանտրէթի Թուրքիոյ բռնակցման 83-ամեակին առիթով, Սուրիոյ Խորհրդարանի 7-րդ շրջանին 25-րդ նիստին ընթացքին երեսփոխան Ժիրայր Րէիսեան խօսք անելով ըսաւ. «Օրին Սուրիան բռնագրաւած ֆրանսական ուժերը Աղէքսանտրէթը թուրքերուն յանձնելով խախտեցին միջազգային օրէնքն ու գրաման պայմանագիրը, որուն 4-րդ յօդուածին համաձայն գրաւող պետութիւնը պարտաւոր է յարգել գրաւած երկրին միասնականութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը»:



Ան յայտնեց, թէ Թուրքիոյ քաղաքականութիւնը երբեք չէ փոխուած, յատկապէս օսմանցիներուն ժառանգորդ ղեկավարներուն կեցուածքները՝ տարածաշրջանի կարգ մը երկիրներուն դէմ: Փաստերը յայտնի են՝ Սուրիոյ գերիշխանութեան խախտումէն, թրքական ուժերուն հիւսիսային Սուրիա ներխուժումէն, ժողովուրդը բռնի թրքացնելու փորձերէն ու անոր դէմ ի գործ դրուած ոճրային արարքներէն սկսեալ, հասնելով մինչեւ գինեալ անարեկական խմբաւորումներուն աջակցութիւնը, սուրիական քարիւղային հարստութեան թալանը եւ այլն:

Րէիսեան աւելցուց. «Պահանջս է չբաւարարուիլ դատապարտումի խօսքեր արտասանելով, այլ այս դատը արծարծել յարակից եւ բարեկամ պետութիւններու խորհրդարաններէն ներս եւ մեր խորհրդարանին միջոցաւ թրքական ոտնձգութիւնները կանխելու եւ Աղէքսանտրէթի սուրիացի քաղաքացիներուն իրաւունքները պաշտպանելու կոչ ուղղել միջազգային ընկերութեան: Կ'առաջարկեմ չբաւարարուիլ բռնագրաման ամեակները յիշելով, այլ ողջ աշխարհին իմացնել եւ յիշեցնել տեւաբար այս բոլորը՝ մինչեւ մեր իրաւունքներուն վերադարձը»:

Յ.ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԻԵԱՆ. «ԱՆՀՐԱԺԵՆՏ Է ՀԱՄԱԽՈՇՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՍԿՉՐՈՒՆՔՆԵՐՈՒ ՇՈՒՐԶ»

Թորոնթոյի «Նոր Հայ Հորիզոն» հեռուստաժամի հիւրն էր ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատրեան:



ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչը խօսած է ՀՀԴ Բիւրոյի Լիբանան այցելութեան, Արցախի մէջ տեղի ունեցած հանդիպումներուն, հայրենիքին առջեւ ծառայած մարտահրաւերները դիմակայելու յաջող քայլերուն եւ Սփիւռքի կայունութեան մասին: «Սփիւռքը առանց հայրենիքի ոչինչ է, եւ հայրենիքը այսօր Սփիւռքի կարիքը ունի ի, որպէսզի կարենայ աշխարհին առջեւ բացուիլ իր դիմագիծով եւ իսկական ուժերով: Անոր համար անհրաժեշտ է լուրջ համախոհութիւն ազգային սկզբունքներուն շուրջ: Զենք կրնար ընդունիլ որեւէ պարտուողականութիւն, որեւէ յանձնու-

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԿԱՐԵԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՒ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՍՏՆՈՐԳ

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 172-րդ նիստը գումարուեցաւ Ուրբաթ, 2 Դեկտեմբեր 2022-ի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, թեմի երեսփոխաններու, Ազգ. Կրօնական Ժողովի, Ազգ. Վարչութեան եւ հիւրաբար ազգ. մարմիններու ատենապետներու ներկայութեան՝ Բերիոյ Թեմի Նոր առաջնորդի ընտրութեան օրակարգով:



ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդառաջելով Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդական ընտրութեան առնչուող թեմի խնդրանքին, պաշտօնագիրով ուղարկեց առաջնորդական ընտրելիներու եռանուն ցանկ մը: Ժողովը այնուհետեւ ընթերցեց Վեհափառ Հայրապետին պաշտօնագիրը եւ եռանդամ ցանկի միաբաններու կենսագրական գիծերը:

Արդարեւ, փակ քուէարկութեամբ եւ միաձայնութեամբ, Բերիոյ Հայոց Թեմի Երեսփոխանական Ժողովը Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանը ընտրեց որպէս Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ:

Արդարեւ, Երեսփոխանական Ժողովի դիւանը պաշտօնական նամակով մը վեհափառ հայրապետը տեղեակ պահեց ընտրութեան արդիւնքներուն մասին՝ հայցելով ընտրութեան վաւերացումը: Այս առիթով, Նորին Ս. Օծուրթիւնը Հայրապետական 3 Դեկտեմբեր 2022 թուակիր պաշտօնագիրով իր հայրական օրհնութիւնը փոխանցեց ժողովական անդամներուն եւ վաւերացուց Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդական ընտրութիւնը: Վեհափառ հայրապետը շնորհաւորեց Բերիոյ Թեմը եւ յաջողութիւն մաղթեց իրագործելի բոլոր ծրագիրներուն ու աշխատանքներուն համար:

Հ.Ե.Մ.

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

— 132 ԱՄԵԱԿ Ե —
1890-2022

ՍՓԻՒՌԵՈՎ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔՈՎ
ԱՆՍԱՍՆ ԱՆՅՈՒԹԻՒՆ

Կիրակի, 11 Դեկտեմբեր 2022-ին երեկոյան ժամը 7:00-ին
«Գեղոյ Եապետ» սրահէն ներս, Միլիտարի, – Հազար:

Խմբագրական

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԸ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՒՆԻ

Բերիոյ Յայոց Թեմը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան երկրորդ մեծ եւ հնագոյն թեմն է: Անոր պատմութիւնը միահիւստուած է Սուրիոյ եւ յատկապէս Յալէպի մէջ հայերու ներկայութեան, համայնքի կազմաւորման պատմութեան հետ:

Թեմի ազգային, եկեղեցական, կրթական, մշակութային եւ միութենական կեանքը հարուստ պատմութիւն ունի. պատմութիւն, որ յաղթահարած է տարբեր ժամանակաշրջաններու դժուարութիւններ, ունեցած է ծաղկումի հպարտառիթ օրեր եւ երկարած միջուկ մեր օրերը, պատերազմի ընկճող պայմաններուն դիմացած ու վերականգնումի շեփորը հնչեցնելով վերըստին ծաղկելու վճռականութեամբ լուսաւորուած:

Ուրբաթ, 2 Դեկտեմբերին Բերիոյ Յայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 172-րդ նիստին երեսփոխանները միաձայնութեամբ ընտրեցին թեմի նոր առաջնորդը, յանձին՝ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի:

Թեմի եկեղեցիներու զանգերը դօղանջեցին աւետելով նոր Առաջնորդին ընտրութիւնը: Յալէպահայութիւնը ցնծումի պահեր ապրեցաւ կրկին:

«Առաջնորդի պաշտօնին կամ կարգին ընտրուիլը խոնարհութեան հրաւեր է: Զոգեւորականին համար աստիճանը, կարգը երբ ծառայութեան համար է, ծառայութիւնը բնականաբար մարդը աւելի խոնարհ կը դարձնէ ու պատասխանատուութեան կը հրաւիրէ», ըսաւ Սրբազան Յայրը իր ընտրութեան առիթով:

Իսկապէս ծառայութիւնը քաղցր լուծ է այդ գիտակցութեամբ աշխատանքի լծուող առաջնորդի մը համար:

Մակար Սրբազան, անցնելով Մեծի Տանն Կիլիկիոյ դպրեվանքի հոգեմտաւոր դարբնոցէն, որպէս առաջնորդի օգնական ծառայելով Թեհրանի Յայոց Թեմին, ապա կրկին Պիքֆայայի դպրեվանքին ծառայելով որպէս ուսուցիչ եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանքին մէջ կիրարկուող «հայագիտական դասընթացներ»-ու դասախօս, կազմակերպչական եւ մտաւորական պատկառելի իր վաստակը ի սպաս կը դնէ Բերիոյ Յայոց Թեմի ծառայութեան, խոնարհութեամբ ծառայող եւ աշխատանքի պտուղներով միայն խանդավառուող առաջնորդի տիպարը մարմնաւորելով:

Բերիոյ Յայոց պատմական թեմը անկիւնադարձ մը կ'ապրի. անկիւնադարձ մը, որ պայմանաւորուած պիտի ըլլայ վերակազմակերպումի, վերականգնումի ծանր, բայց պատասխանատու աշխատանքներով:

Երկրի ներկայ պայմաններուն մէջ նոր թափով յառաջանալը իմաստութիւն, համբերութիւն եւ անդուլ աշխատանք կը պահանջէ հաւասարապէս:

Բերիոյ Յայոց Թեմը պատերազմի տարիներու իր ապրած բոլոր դժուարութիւններով մէկտեղ կը շարունակէ մնալ լուսաւոր փարոսը սուրիահայութեան: Յետպատերազմեան շրջանի աշխատանքները, սակայն, դժուարութիւններէ գերծ չեն մնար, պատերազմի տարաբնոյթ հետեւանքները կը շարունակեն ազդել թեմի գաւակներու հոգեմտաւոր կեանքին ու կենցաղին վրայ: Այսուհանդերձ, կը հաւատանք, որ անկիւնադարձային այս փուլը նոր էջ մը պիտի բանայ թեմի կեանքին մէջ. էջ մը, որուն տողերը միասնականութեամբ, համախմբուած ճիգերով ու տքնաջան աշխատանքով կարելի պիտի ըլլայ հարստացնել, որպէսզի տիրող ծանր պայմաններուն ազդեցութեան տակ մնալու փոխարէն, այդ պայմաններու յաղթահարման համար ծրագիրներ մշակենք միասնաբար ու կեանքի կոչենք զանոնք:

Շնորհաւորելով նորընտիր Առաջնորդը, բարեյաջող ծառայութիւն կը մաղթենք Մակար Սրբազանին եւ յուսափայլ ու ծաղկուն օրեր Բերիոյ Յայոց Թեմին:

«Գ.»

-Սուէյտայի Նահանգապետարանը օրեր առաջ յարձակման թիրախ դարձաւ, որուն հետեւանքով այլ նիւթական մեծ վնասներ կրեց:

Օրեր անց, Սուէյտայի փոխնահանգապետ Ուաէլ Ճարպուհ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ Նահանգապետարանէն ներս աշխատանքը վերսկսած է:



-Սուրիոյ Ներքին Առեւտուրի Նախարարութիւնը յայտարարեց, որ ներածող ընկերութիւններու ճամբով քարիւղային արտադրութիւններու յաւելեալ քանակ պիտի ապահովուի այս ամսուան արտադրողական եւ առեւտրական աշխատանքներու իրականացման համար:

Նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ ներածող ընկերութիւններուն միջոցաւ արդիւնաբերական եւ առեւտրական աշխատանքներու համար ապահովուած մագուրթ 1 լիթրին գինն է 5400 ս.ո., իսկ պէնզինինը՝ 4900 ս.ո.:



-Սուրիոյ մէջ տիրող քարիւղային արտադրութիւններու տագնապին,

անոնց Սուրիա հասնելու ուշացման եւ երկրին դէմ պարտադրուած տնտեսական պատժամիջոցներուն հետեւանքով, Երեքշաբթի, 6 Դեկտեմբերին, Սուրիոյ վարչապետ Յուսէյն Արուս Կիրակի, 11 Դեկտեմբեր եւ Կիրակի 18 Դեկտեմբեր 2022-ը Սուրիոյ մէջ արձակուրդ յայտարարեց:



-Սուրիոյ հանքային հարստութեան նախարար Պասսամ Թաամէ յայտնեց, թէ Յունաստանի մէջ ԱՄՆ-ի ծովուծին կողմէ ամփնտրել պաշարուած քարիւղատարը Պանիասի Նաւահանգիստ հասած է արդէն:

Նախարար Թաամէ սուրիական պաշտօնական պատկերասփիւռային կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին անդրադարձաւ վերջերս երկրին մէջ տիրող վառելանիւթի տագնապին, ըսելով. «Քարիւղատարի պաշարման հետեւանքով, երկիրը աւելի քան 50 օրէ ի վեր վառելանիւթի տագնապէ կը տառապի, միակ լուծումը պահեստէն օգտուիլն էր, որպէսզի ժողովուրդին կարիքը ապահովուի»:



Այս առիթով «Ուաթան Անլայն» ստոյգ արթիւրէ տեղեկացած է, որ Շաբաթ, 3 Դեկտեմբերի առաւօտեան ժամերուն, 700.000 քարիւղային արտադրութիւններու տակար հասած է Պանիասի Նաւահանգիստ:

-Սուրիոյ կեդրոնական դրամատան արժոյթներու պատասխանատու բաժնի տնօրէն Սալէմ Ճունտի հաստատեց, որ ներկայիս դրամատունը 10.000 սուրիական թղթոսկի հրատարակելու ծրագիր չունի, աւելցնելով, որ այդ մէկը կախեալ է տընտեսական իրավիճակի փոփոխութիւններէն:

Իր կարգին, դրամատան տնտեսական հետազօտութիւններու բաժնի տնօրէնուհի Ճումանա Խաճա յայտնեց, որ բարձրարժեք թղթոսկի հրատարակելը ազդեցութիւն չունենար գնաճին վրայ, այլ հոգեբանական ազդեցութիւն կ'ունենայ քաղաքացիներուն վրայ:



Ան աւելցուց, որ 2021-ին, երբ դրամատունը 5000 սուրիական թղթոսկի հրատարակեց, ժողովուրդը ենթադրեց, որ տնտեսութիւնը տապալեցաւ, մինչդեռ հրատարակումը սահմանափակ էր:

ՍՕ ԽԱՉԻ ԱՄԱՆՈՐԵԱՆ ՅՈՒՑԱՅԻՆՈՒԷՍ-ՎԱՃԱՌՔ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Մակար Ս. Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան, Հորեքաբքի, 29 Նոյեմբեր 2022-ի առաւօտեան ժամը 11:00-ին բացումը կատարուեցաւ ՍՕ Խաչի ամանորեան ամանորեան ցուցահանդէսին Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս, մասնակցութեամբ ՍՕ Խաչի Ձեռնարուեստի, Աշխատանցի, Մանկամտօրի, Առողջապահական, «Փեթակ» եւ «Շիրակ» վաճառատան յանձնախումբերուն, ինչպէս նաեւ նստավայրի երեք մասնաճիւղերու եւ Քեսապի «Մեղրի» եւ «Գետաշէն» մասնաճիւղերու վարչութիւններուն:



Յուցահանդէսի բացման Սրբազան Հոր կողքին ներկայ էին հոգեշնորհ Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, ՀՀ Հայկախոյ Գլխավոր Հիւպատոս Բարգէն Պատալեան, Պատուելի Սիմոն Տէր Սահակեան, Սուրբոյ Խորհրդարանի երեսփոխան Լիւսի Իսկէնեան, Պատկան Մարմնի ներկայացուցիչը, գաղութի հայրենակցական միութիւններու, Շրջ. Վարչութեան եւ յանձնախումբերու ներկայացուցիչներ, հիւրեր եւ խաչուհիներ:

Յուցահանդէսի պաշտօնական բացումը կատարուեցաւ ձեռամբ Սրբազան Հոր եւ ՀՀ Հայկախոյ Գլխավոր հիւպատոս Բարգէն Պատալեանի:

ՍՕ Խաչի քայլերդին ունկնդրութենէն ետք, Սրբազան Հայրը եւ ներկայ հիւրերը շրջեցան սրահին մէջ եւ ծանօթացան ցուցադրուած աշխատանքներուն, հաղորդեցին իրենց տպաւորութիւնները, գնահատելով ծառայատէր ու նուիրեալ հայ կիները:

Բացման խօսքով Ձեռնարուեստի Յանձնախումբի անդամ Թինա Գասպեան ըսաւ. «Սուրբազան Սրբազան Սրբազան Հայրը մեզ համար շատ կարևոր է, որովհետեւ մենք իրաւականացուող ամանորեան ցուցահանդէսը այս տարի կը ներկայանայ Այնթապի աստղագործութեան ընտրանիով:

Այնթապի աստղագործութիւնը արտայայտիչ է իր ոճով, երկրաչափական պարզութեան հասած գարդածներով: Աստղագործութեան կիրառումը տեղի կ'ունենայ ճերմակ ասուի, այսինքն «կերպաս» կամ մետաքսի վրայ: Աստղագործութեան գիտակներու համաձայն, Այնթապի ձեռագործ ունի երեք բաղադրիչներ.

- Ա. - Օյա (այսինքն աստղագործ ժանեակ)
- Բ. - Գծային կամ համրովի հարկար
- Գ. - Թելքաշ

Սակայն գործին հիմքն ու ոգին թելքաշն է: Զառուած մասերու թելերը վերահիւսուելով որպէս ցանց կ'օգտագործուին «fillet» կոչուած աշխատանքին: Այնթապի գործին մէջ աստղակարէն անկախ օգտագործուած գարդածները մեզի հասած են հնագոյն ժամանակներէ: Որպէս օրինակ՝ Կազի Այնթապի թանգարաններէն մէկուն մէջ ցուցադրուած է հետաքրքրական փոքրիկ ձեռագործ մը, որուն կեդրոնական գարդածը բացառիկ նրմանութեամբ իր փորագրուած տարբերակը ունի միջնադարեան խաչքարի մը վրայ, զոր յայտնաբերուած է Հայաստանի Շիրակ մարզին մէջ:

Ամենասիրուած գարդածներէն եղած է աստղածաղիկը կամ ութաթեւ աստղը, որ անելի բազմապատկման նշանը կամ լատիներէն x տառը, ինչպէս նաեւ խաչը կը յիշեցնէ: Ան կը խորհրդանշէ կենսական չորս ուժերը (հողը, ջուրը, օդն ու հուրը):

1890-ական թուականներուն ձեւաւորուած են աշխատանքի նոր չափանիշներ: Այստեղ ձեռագործի կեդրոնի (կեօպեկի) ութաթեւ աստղը իր տեղը գիշած է հրեշտակներուն, սիրահար գոյգերուն, տաւիղի, ծաղկեփունջերուն, երբեմն համեմուած քրիստոնէական փոքրիկ միջամտութիւններով, խաղերով, սրտիկներով:

Ժամանակի ընթացքին Այնթապի գործին մէջ ուղղագիծ հարթկար (իբէլի իշի)-էն բացի մեծ տարածում գտած է այլ ձեւ մը, որ ժողովուրդի կողմէն կոչուած է դապարթեմա (պիւրիւ միթի), որուն հիմնական յատկանիշը ցուրտութիւնն է: Չարդածներու անունները յաճախ թրքերէն են քանի այնթապահայութիւնը թրքախօս եղած է: Այսպիսով հիւսուածքներէն ոմանք կը կրեն աստղագործողին անունը օրինակ (Աննա) կամ (Ճեմէլեան):

Իսկ գարդիղը (աժուր) եղած է բանուածքի «մենաընդհանրացած ձեւերէն մէկը:

Այսօր հազուադէպ է գտնել հայ տիկիներ, որոնք կը գբաղուին Այնթապի աստղագործութեամբ:

Իր խօսքի ամառտին ան յայտնեց. «Մենք ժառանգորդներն ենք հայ մշակութային արժէքներուն, մեզի վիճակուած է հաւատարմօրէն պահպանել ու փոխանցել հայ աստղագործութեան ժառանգութիւնը»:

Աշխատանցի Յանձնախումբի ատենապետուհի Սիրուն Թաշճեան ըսաւ. «Աշխատանցի Յանձնախումբի ընկերուհիները այսօր կը ներկայացնեն շրջանի մը անսակարկ եւ բծախնդիր աշխատանքի արդիւնքը: Անոնք խմբային աշխատանքով փորձեցին լաւագոյնը հրամցնել հանրութեան»:

Ապա Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեան խօսք անելով ըսաւ. «104-ամեայ ՍՕ Խաչը իր մարդասիրական, բարեսիրական

սրբազան առաքելութեամբ եղած է ու կը մնայ հայ կնոջ նկարագրի կազմաւորման հոգեմտաւոր դարբնոցը: Այստեղ հայ կինը շատ բան ունի սորվելիք, ապա որպէս խաչուհի շատ բան ունի տալիք: ՍՕ Խաչը իր բազմածաւալ աշխատանքին զուգահեռ կը նպաստէ հայ մշակոյթի պահպանման եւ հայ արուեստի ծաղկումին»:

Ապա յիշեց, որ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը այս տարի եւս Դամասկոսի Diplomatic Women Club-էն հրաւեր ստանալով իր մասնակցութիւնը բերած է անոր՝ 21 երկիրներու ներկայացուցիչներուն կողքին:

Իսկ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ, ՍՕ Խաչի նըստավայրի եւ շրջաններու կարգ մը մասնաճիւղեր, ինչպէս նաեւ աշխատանցի եւ Ձեռնարուեստի Շրջանային յանձնախումբերը մասնակցած են հայաբոյր Քեսապի մէջ կայացած փառատօնին:

Ան ուրախութեամբ տեղեկացուց, թէ ամրան Շրջ. Վարչութիւնը յառաջացուց Պաշարի Յանձնախումբ մը, որ կը գբաղի տնային մաքուր պաշարի արտադրութեամբ: Պաշարի արտադրութիւնները պիտի վաճառուին «Շիրակ» վաճառատան մէջ, որուն բացումը կատարուեցաւ վերջերս ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ընկերուհիներու ներկայութեան:

Այնուհետեւ Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեան հրաւիրեց Սրբազան Հայրը իր սրտին խօսքն ու օրհնութիւնը տալու:

Սրբազան Հայրը ի տես հայկական մշակոյթի պահպանման սատարող այս ձեռնարկին ըսաւ. «Այսօր, ձեր մէջ ըլլալով, այնքան գեղեցիկ եւ հարազատ հայկական հոգիին, շունչին, մեր ակունքներէն եկող արժէքներուն հետ անգամ մը եւս հաղորդակից կը դառնանք: Կարծեք անցեալը կենդանացած է եւ ներկային մէջ մեզ կը զօրացնէ, կը գօտեպնդէ, որպէսզի անելի յոյսով ու զօրացած դէպի ապագայ բացուինք»:

Ան իր գնահատանքը յայտնեց մեր մայրերուն եւ քոյրերուն, որոնք իրենց ստեղծագործական աշխատանքներով կը փորձեն անցեալի արժէքները նոր շունչով ներկայացնել:



Այցելուները հիացմունքով կը դիտէին սրահի կեդրոնը տեղադրուած ընկուզենիի փայտէ շինուած անցեալի հարսին օժիտի սնտուկը, որ ծածկուած էր ընտիր Այնթապի աստղագործ ծածկոցներով, որուն ընդմէջէն կը ցոլային մեր մեծ մայրերուն մատներու ճարտարապետութիւնն ու ճաշակը:

Յուցահանդէսին ներկայացուած էին բազմատեսակ աստղագործներ հայկական գաւառներէն՝ Այնթապէն, Ուրֆայէն, Բիլիսէն, Վանէն, Տիգրանակերտէն, Մարաշէն, Լասեի, Էթամիսի, Նորվեկիան, Սվազի, բազմատեսակ նմուշներ:

Յուցադրուած էին նաեւ նորօրեայ տպածոյ ամանորի յատուկ ծածկոցներ, անձեռոցներ, հայատառ տպածոյ շղարշներ, յատկապէս տօնական առիթներու համար պատրաստուած որակաւոր հաւաքածոյ մը, որոնք բարձրաճաշակ ու պայծառ գոյներու ներդաշնակութիւնը տարբեր խորհրդաւորութեամբ լեցուցած էր սրահը:

Սրահէն ներս ուշագրաւ էին նստավայրի մասնաճիւղերու շքեղազարդ սեղանները, գանազան տեսակի համադրամ պաստեղներ, ընտիր գիւնիներ, խմիչքներ, եւ անլ:

Այս տարի իւրայատուկ երեւոյթ էր նստավայրի մասնաճիւղերուն կողքին Քեսապի «Մեղրի» եւ Գարատուրանի «Գետաշէն» մասնաճիւղերու մասնակցութիւնը իրենց արտադրութիւններով: Քեսապի բարբեր հողէն ընկերուհիներու ճարտար ձեռքերով պատրաստուած էին խաղողի ռուպը, քացախը, մեղրը, նուռի հիւթը, բկեղը, օճառը եւ հայկական գանազան մրգեղէններ:

«Շիրակ» պաշարի յանձնախումբը ցուցադրած էր պաշարի տեսականի:

Իսկ ՍՕ Խաչի «Փեթակ» խոհանոցի սեղանները ճոխ էին հայկական համեղ ճաշատեսակներով:

Այս տարի Առողջապահական Յանձնախումբը եւս իր մասնակցութիւնը բերած էր, իւրաքանչիւր տան համար բուժօգնութեան եւ անոր յարակից նիւթերու ցուցադրումով:

Մանկամտօրի Յանձնախումբի սեղանները գարդարուած էին փոքրիկներու յատուկ քաղցրաւենիքի ծրարներով, ցպիկներով գարդարուած գոյնզգոյն կրկնեփունջներով եւ այլն:

Այս բոլորը ներկայացուած էին ճաշակաւոր յարդարումով, բծախնդիր աշխատանքով ու կ'արտացոլացնէին հայ կնոջ տաղանդը եւ տանտէրն ու նուիրեալ աշխատանքը:

Յուցահանդէսին ներկայ էին նաեւ տեղական լրատուամիջոցներ, ինչպէս՝ «Գանձասար»-ը եւ «Ռատիօ Երբազ»-ը:

Սոնիա Համպարճեան-Ճարպիկեան

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ՝ ԳԵՐԱՇՆՈՐՆ՝ Տ. ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆԻ

Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան աւագանի անունով Եսայի, ծնած է Պեյրուս-Լիբանան, 21 Մարտ 1972-ին:

Նախնական կրթութիւնը ստացած է Այնճարի «Յառաջ» վարժարանին մէջ: Երկրորդական ուսումը շարունակած է Այնճարի «Գալուստ Կիւլպէնկեան» Գոլէճին եւ Պուրճ Ճամբուտի «Շամիլեան Թաթիկեան» Երկրորդական վարժարանին մէջ:

Մանկութենէն ծառայած է Այնճարի «Ս. Պօղոս» եւ ապա Պուրճ Ճամբուտի Նոր Ատանայի «Ս. Աստուածածին» եկեղեցիներուն մէջ 1977-էն-1999, եւ յաջորդաբար ձեռնադրուելով՝ ստացած է դպրութեան, կիսասարկաւագութեան եւ սարկաւագութեան աստիճաններն ու կարգերը: Այդ ծառայութեան կողքին, ան որոշ ժամանակ ստանձնած է նաեւ դպրապետութեան եւ երգեցիկ խումբի ղեկավարութեան պաշտօնները, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Անկա պատանեկութեան եղած է կըրտներ եւ պատանի, ինչպէս նաեւ՝ Բ.Ս.Ը.Մ. - ական գայլիկ եւ ապա սկաուտ:

1989-ին մուտք կը գործէ աշխատանքային ասպարէզ եւ շուրջ 10 տարի կը զբաղի ոսկերչական աշխատանքով եւ այդ առումով կ'ըլլայ նաեւ Լիբանանի Ոսկերիչներու Սենտիքայի անդամ:

Եսայի Սարկաւագը 1999 թուականին կուսակրօնութեան յատուկ կոչում զգալով, աշխարհական կեանքը ետին կը ձգէ եւ մուտք կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք: Գոն համապատասխան կրօնական, աստուածաբանական, հայագիտական, փիլիսոփայական ու հոգեբանական ուսման ժամանակաշրջանը յաջողութեամբ աւարտելէ ետք՝ 2001 թուականին Մայիս 20-ին, Յայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի որպէս սերունդ, կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի ու կ'օծուի ձեռամբ՝ օրուան Կիպրոսի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Զերկէլեանի, վերակոչուելով՝ Մակար արքեպ:



Նոյն տարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ Սեպտեմբեր ամսուն կը նշանակուի Դպրեվանքի հսկիչ: Զսկիչութեան կողքին Դպրեվանքին մէջ կը վարէ ուսուցչութեան պաշտօն, դասաւանդելով Զին եւ Նոր Կտակարաններու ներածութիւն եւ շարականագիտութիւն: Երկար ժամանակ Դպրեվանքին մէջ կը ստանձնէ մառան-մատակարարապետութեան պաշտօն, ինչպէս նաեւ 10 տարիներ շարունակ կը վարէ Մայրավանքի ընդհանուր Դպրապետութեան պաշտօնը եւ զուգահեռ՝ Դպրեվանքի տղոց երգչախումբի ղեկավարութիւնը:

2004-ի Յուլիսին Յունաստանի Առաջնորդ Գերայ. Տ. Խորէն Ծ. Վրդ. (այժմ արքեպիսկոպոս եւ Կիպրոսի Կաթողիկոսական փոխանորդ) Տողրամաճեանի եւ Ազգային իշխանութեան խնդրանքով, յատուկ առաքելութեամբ Վեհափառ Զօր տնօրինումով կ'ուղարկուի Զինսիսային Յունաստանի Թեսաղոնիկէ Զաղաքը, ուր կը ստանձնէ տեղւոյն հայ համայնքի հոգեւոր հովուութեան պաշտօնը, մինչեւ 2005-ի Զոկտեմբեր ամիսը:

2005-ի Զոկտեմբերին Վեհափառ Զայրապետի կողմէ վերստին Մայրավանք կը կանչուի ստանձնելու համար Դպրեվանքի փոխ տեսչութեան եւ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբի հոգեւոր տեսչութեան պաշտօնները: Այդ միջոցին ան կը շարունակէ դասաւանդել Դպրեվանքին մէջ, դարձեալ ստանձնելով Մայրավանքի Դպրապետութիւնը ինչպէս նաեւ՝ *Ներվանական* այլ պաշտօններ:

2009 թուականի սկիզբը Զայր Սուրբը կը ներկայացնէ իր վարդապետական աւարտաճառը, նիւթ ունենալով՝ «Աստուած Մարդ Յարաբերութիւնը Զրիստոսով» Մատթոսի Աւետարանի բացատրողական մեկնութիւնը: Եւ Մարտ ամսուն, ձեռամբ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմեգեանի, իր օծակիցին՝ Գրշ. Տ. Գեղարդ արք. Զիւսապետեանի հետ միասին, կը ստանայ Վարդապետական գաւազան կրելու իշխանութիւն:

2010 թուականի ամռան կը մեկնի Իտալիա եւ Սարտէնիոյ L'Insitutto

D'Euro Mediterraneo-ի մէջ կը հետեւի Vocal Anatomy-ի խտացեալ դասընթացներու:

2011-ին կը ստանայ լանջախաչ կրելու իրաւունք:

Որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան, մասնակցած է գաւազան միջկրօնական եւ միջ-եկեղեցական ժողովներու եւ սեմինարներու, կազմակերպուած թէ՛ Միջին Արեւելքի եկեղեցիներու եւ թէ՛ Զամաշխարհային եկեղեցիներու հորհուրդին կողմէ Կիպրոսի, Յունաստանի, Եգիպտոսի, Սուրիոյ, Լիբանանի, Թուրքիոյ, Զոմի եւ Չուիցերիոյ մէջ: Ան անդամ է Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ Աստուածաշնչական Միացեալ Ընկերութիւններու միջեւ համագործակցութեան մայրուն Յանձնաժողովին ինչպէս նաեւ՝ Կաթողիկ եկեղեցւոյ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու միջեւ Աստուածաբանական երկխօսութեան մայրուն Յանձնաժողովին:

2011 թուականի Յուլիս 17-ին Թեհրանի Զայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի եւ տեղւոյն Ազգային Իշխանութեան խընդորանքով եւ Վեհափառ Զայրապետի օրհնութեամբ, Մակար վարդապետը որպէս Առաջնորդի օգնական կ'առաքուի Թեհրան: Այնտեղ իրեն վստահուած աշխատանքները նախանձախնդրօրէն կատարելով՝ կը բարձրանայ առաջնորդական փոխանորդի պաշտօնին:

2013-ի Դեկտեմբերին կը ներկայացնէ Ծայրագոյն վարդապետութեան աւարտաճառը, նիւթ ունենալով՝ «Անենասարբուհի Մարիամ Աստուածածինի Յաւերժ Կուսութիւնը Ըստ Առաջին Զինգ Դարերու Եկեղեցական Զայրերու եւ Մեր Եկեղեցւոյ Զասկացողութեան», եւ նոյն ամսուն վերջին կիրակին Վեհափառի օրհնութեամբ եւ հրամանով կը ստանայ Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ձեռամբ՝ Թեհրանի Զայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ա. Արք. Սարգիսեանի:

Իսկ չորս ամիսներ ետք, 27 Ապրիլ 2014-ին, Եպիսկոպոսական օծում կը ստանայ ձեռամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Եւ այդ թուականէն մինչեւ 2017-ի Սեպտեմբեր ամիսը կը վարէ նաեւ Թ.Յ.Թ.Յ-ի Կրօնական հորհուրդի ատենապետութեան պաշտօնը:

Եօթը տարիներ եւ անէլի Թեհրանի Թեմին մէջ ծառայելէ ետք Վեհափառ Զայրապետի տնօրինումով կը վերադառնայ Մայրավանք եւ կը ստանձնէ Մայր Տաճարի լուսարարապետութեան պաշտօնը, առընթեր նաեւ կը դասաւանդէ Զին Կտակարանի ներածութիւն, Զին Կտակարան եւ Կրօնագիտութիւն՝ Դպրեվանքի ընծայարանական, քահանայից եւ Կաթողիկոսարանէն ներս հաստատուած հայագիտական բաժիններուն մէջ:

Մակար Եպիսկոպոս Աշգարեան իր ստանձնած բազմաթիւ պարտականութիւններու եւ պաշտօններու կողքին հաւատարիմ հայ գիրքին եւ ընդհանրապէս գրականութեան, կը շարունակէ կարգալ, ուսումնասիրել, գրել ու թարգմանել: Ան ունի թէ՛ հեղինակային եւ թէ՛ թարգմանական բազմաթիւ աշխատանքներ, որոնցմէ մնաց 2004 թուականէն ի վեր իբրեւ յօդուածաշարք կը տպուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնական «Զասկ» ամսաթերթին մէջ, իսկ ուրիշներ ալ դեռ կը մնան անտիպ: Վերջերս տպուեցաւ իր հեղինակած «Յովհաննէս Առաքեալի Երեք ընդհանրական Նամակները» աշխատասիրութիւնը, արեւելահայերէն, Թեհրան եւ «Մեծն Սուրբ Մակարի Զարոգները», թարգմանութիւն, Անթիլիաս-Լիբանան: Այժմ կը զբաղեցնէ Կաթողիկոսութեան Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչի եւ Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչի պաշտօնը:

ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ...

Սիկաք՝ էջ 7

տելը, անշուշտ ձեռնայիններ ընելով եւ ամէն տարի նորութիւն մը ստեղծելով. այդ նորութեան մէջ գաւազաններս ալ դեր ունենի՝ իրենք կը պըրպտէին, կ'որոշէին եւ յետոյ միասին կ'իրագործէին:

Աւանդութիւն Էր նաեւ թագածեւ միսը, որ Կաղանդի մեր սեղանին զխաւոր տեսակն ու գարդն Էր միաժամանակ:

Յետոյ կար Նոր Տարուան առաւօտներուն խաղաղութեան մէջ հանգիստ նստած նեքքաֆէ խմելն ու ... ծայրայեղօրէն գոհ ըլլալը: Նոր Տարին ոչ միայն նոր ծրագիրներ կը բերէր իր հետ, այլեւ մեզ կը պարտէր իր տաք շունչով, - հակառակ պաղ օդին, - մեր աչքերուն առջեւէն կը տողանցէին մեր օրհնութիւնները եւ կարծես երջանկութիւնը կը թեւածէր տան մէջ, Կաղանդի ծառին շուրջ:

Ճիշդ է, որ այդ բոլորը անցեալ դարձան, բայց անոնց յիշատակը այնքան թարմ մնացած է, որ ամէն

Կաղանդի գաւազաններս կը փորձեն ստեղծել նոյն այդ մթնոլորտը, ստեղծել իրենց ընտանեկան աւանդութիւնները, իսկ ես կը գոհանամ, յուշերուս մէջ պարտուած, իրենց կեանքը դիտելով եւ աղօթելով իրենց բարօրութեան համար:

Ամէնտարի Կաղանդի հեքիաթ մը, ուր ոչ թէ կաղանդ պապան մեզմէ իւրաքանչիւրին սրտին փափաքը կը կատարէ, - անշուշտ եթէ հաւատանք իրեն, - այլ մեզմէ իւրաքանչիւրը իր կողքին սրտին փափաքը կը կատարէ:

Իսկ ի՞նչ կը կարծէք որ ըլլայ մեր սրտին փափաքը ...

Դուք չեմ գիտեր թէ ի՞նչ կը կարծէք, ես կը կարծեմ, թէ մեզմէ իւրաքանչիւրը պիտի փափաքի ունենալ անկեղծ եւ մտերիմ բարեկամներ եւ համերաշխ ու սիրով լեցուն ընտանիք. ոչ թէ շատ-շատ նուէրներ, այլ համերաշխութիւն, ուր կարելի ըլլայ տարբեր կարծիքներ ունենալ, բայց յարգել գիրար, մնալ բարեկամ, մնալ ընտանիք:

Եւ Կաղանդի այս հեքիաթն ու աւանդութիւնները պատմել ու ապրիլ ամբողջ տարուան ընթացքին:

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՔ Է ՖՐԱՆՍԱԶՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԵՆ ՎԵՐՑՆԷ ՅԵՐԱՍՊՈՂԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՉՈՐԵՐՈՒ ԳԱՆԿԵՐԸ



Յարուիթ Սասունեան

28 Նոյեմբեր 2022-ին, «Նիւ Եորք Թայմզ» թերթը հրապարակած է լրագրող Զարուիթ Սասունեանի ընդհանուր յօդուածը՝ «Փարիզի թանգարանը ունի 18 հազար գանկ. դժուար է ըսել, թէ անոնք որո՞ն են», վերնագրով:

Յօդուածը ցոյց կու տայ, որ Փարիզի Մարդու թանգարանին մէջ կը պահուի «Մարդու աճիւններու հսկայական հաւաքածոյ»: Այս թանգարանին նկուղը կը գտնուի «18 հազար գանկեր, որոնք շարքին են ասիական գեղերու առաջնորդներու, քանակութեան հաստատմանը եւ Ռվկիանիոյ բնիկ մարդոց աճիւնները: Անոնց մէջ շատեր հաւաքուած են ֆրանսական նախկին գաղութներու մէջ: Հաւաքածոն կը ներառէ նաեւ արեւելքի 200 բնիկ ամերիկացիներու գանկեր, անոնց շարքին՝ Սու եւ Նաւահո գեղերու գանկերը: Մետաղական դարակներու վրայ ստուարաթուղթ արկղերու մէջ պահուող աճիւնները կը կազմեն Մարդու գանկերու ամենամեծ հաւաքածոններէն մէկը աշխարհի մէջ՝ ընդգրկելով դարեր եւ ներառելով աշխարհի բոլոր անկիւնները»: Գանկերէն հինգը կը պատկանին Հայոց Յեղասպանութեան գոհերուն: Թանգարանը չէ հրապարակած 18 հազար գանկերուն ինքնութիւնը՝ վախճանով փոխ հատուցման հայցերէն:



Ես կարողացած եմ Ֆրանսայի Ծերակոյտի յանձնախումբին 15 Դեկտեմբեր 2021-ի գեղոյը թանգարանին մէջ աճիւններու ճակատագրին վերաբերեալ առաջարկուող օրէնքի քննարկման մասին: Այդ հանդիպման ժամանակ առաջարկուող օրէնքի համահեղինակ ծերակուտական Զեթորն Սորըն-Տիւեյլի յայտարարեց՝ «գարնանայի է, որ մեր հաւաքածոններուն մէջ կը յայտնաբերենք գանկեր, Հայոց Յեղասպանութեան ժամանակէն»: Առաջարկուող օրէնքի մէկ այլ համահեղինակ, ծերակուտական Փիեռ Ուզուլիաս արեւցոյց. «Ես ընկճուած էի գիտնալով, որ Տեր-ալ Զօրի մէջ (Սուրիա) յայտնաբերուած Հայոց Յեղասպանութեան գոհերու հինգ հայկական գանկեր տակաւին կը գտնուին Մարդու թանգարանի հաւաքածոններուն մէջ»:

Զանի որ «Նիւ Եորք Թայմզ»-ի թղթակից Մելուս իր յօդուածին մէջ նշած էր, որ ինք գաղտնի փաստաթուղթեր ձեռք բերած է թանգարան գտնուող Մարդու աճիւններուն մասին, ես գրեցի իրեն՝ հարցնելով, թէ արդեօք այդ փաստաթուղթերը կը պարունակեն մանրամասնութիւններ Հայոց Յեղասպանութեան հինգ գոհերու գանկերուն մասին: Ան ինձի տեղեկացուց, որ ատոնք կիներու գանկեր էին, զորս ֆրանսացի նախապատմութեան մասնագետ Էմմանուէլ Փասեմար հաւաքած էր Սուրիոյ մէջ իր հետագօտութիւններուն ընթացին, 1925-1926 թուականներուն: Ֆրանսական նախապատմութեան ընկերութեան տեղեկագիրը կը հաղորդէ, որ Փասեմար դասախօսութիւն տուած է Փարիզի Սորպոնի համալսարանին մէջ, 16 Փետրուար 1927-ին. դասախօսութեան ընթացքին ան նկարագրած է իր ճամբորդութիւնը դէպի Եփրատ գետի ափերը, Սուրիոյ մէջ:

Մելուս իր յօդուածին մէջ գրած է, որ «Թէեւ Ֆրանսա յառաջատար է եւրոպայի մէջ գաղութատիրութեան ժամանակաշրջանի գտածոներու՝ մարդու ձեռքով ստեղծուած մշակութային առարկաներու հաւաքածոններու հետաքննման եւ վերադարձի հարցով, սակայն աճիւններու խնդրով ան ետ կը մնայ իր դրացիներէն»: Աճիւններու պահանջատերը պետք է ապացուցէ ժառանգական կապը: Այսուամենայնիւ, «որեւ վերադարձ՝ ֆրանսական օրէնսդրութիւնը դարձուցած է ծանր եւ ժամանակ սպառող գործընթաց»:

Մելուս արեւցոյցած է. «Ինչպէս 19-րդ դարու միւս թանգարանները, Մարդու թանգարանը ի սկզբանէ եղած է ամբողջ աշխարհէն հաւաքուած իրերու պահոց: Գանկերը հաւաքուած են հնագիտական պեղումներու եւ գաղութային արշաւներու ժամանակ, երբեմն գիտնորներու կողմէ, որոնք զըլխատած են դիմադրութեան մարտիկները: Աճիւնները, որոնք գնահատուած են, այժմ վարկաբեկուած գեղային գիտութեան բնագաւառին մէջ աշխարհը հետագօտողներու կողմէ, այնուհետեւ յարաբերական մոռացութեան մատնուած են: 1989-ին, Ֆիլիպ Մենեսիեր (թանգարանի) վարիչը, կազմած է հաւաքածոյի առաջին շտեմարանը: Ասիկա անոր հնարաւորութիւն տուած է բացայայտելու հարիւրաւոր, ինչպէս ան կոչած է՝ «հնարաւոր վիճարկելի» գանկեր՝ հակազդուող մարտիկներու եւ բնիկ մարդկանց աճիւնները, որոնք հաւաքուած էին իրեր պատերազմի արաւ կամ թալանուած էին հետախոյզներու կողմէ: աճիւններ, զորս կրնային պահանջել բոլոր անոնք, որոնք կը փափաքէին յարգել իրենց նախնիներուն յիշատակը»:

Բնագիտական պատմութեան թանգարանի բարձրաստիճան պաշտօնէայ Բրիսթին Լեֆելը, որ կը վերահսկէ Մարդու թանգարանը եւ Մարթին Ֆրիզ, որ պատասխանատու է թանգարանի ժամանակակից մարդաբանութեան հաւաքածոններու համար, Մելուսին ըսած են, որ տեղեկութիւնը չէ հրապարակուած գաղտնիութեան, վախի, հակասութիւններու եւ որոշ աճիւններու ինքնութեան մասին գոյութիւն ունեցող անորոշութեան պատճառով: «Բայց քանի մը ակադեմիկոսներ եւ օրէնսդիրներ կ'ըսեն, որ թանգարանի դիրքորոշումը կը բխի արեւելքի մեծ մտահոգութենէ, որ թափանցիկութիւնը կրնայ բանալ փոխ հատուցման պահանջները», գրած է Մելուս: «Վերջին երկու տասնամեակներուն ընթացքին Ֆրանսա վերադարձուցած է սօտաւորապէս 50 աճիւններ, որոնք շարքին՝ Հարաւային Ամերիկէի, Նոր Զելանտայի եւ Ալճերիոյ»:

Մելուս բացատրած է, որ «Հարցերը արեւելք կը բարդանան, որովհետեւ պետական թանգարաններու հաւաքածոններուն մէջ գտնուող իրերը կը պատկանին ֆրանսական պետութեան եւ չեն կրնար փոխել իրենց սեփականութիւնը, այնքան ատեն որ գտնուող վերադարձները օրէնքը չէ քուէարկուած. ծանր գործընթաց մը, որ երբեմն ստիպած է Ֆրանսայի աճիւնները փոխ տալ՝ սեփականութիւնը զիջելու փոխարէն: Ֆրանսայի մշակոյթի նախարարութեան ներկայացուցիչը ըսած է, որ պաշտօնէաները կ'աշխատին համապարփակ օրէնքի մը վրայ՝ կարգաւորելու համար Մարդու աճիւններու ապագայ վերադարձը»: Ֆրանսայի կառավարութիւնը դեռ պետք է ընդունի «Ծերակոյտի կողմէ Յունուարին ընդունուած այն օրինագիծը, որ կը ջնջէ խորհրդարանին կողմէ իւրաքանչիւր փոխ հատուցում հաստատելու անհրաժեշտութիւնը»:

Ֆրանսայի Ծերակոյտի յանձնախումբի լուսմերուն ընթացքին, անդրադառնալով Հայոց Յեղասպանութեան գոհերու գանկերուն, Ծերակուտական Ուզուլիաս իր գործընկերներուն ըսաւ. «Ասիկա անհանդուրժելի է: Մենք դիւանագիտական գլխաւոր հակամարտութեան մը սպառնալիքը կը յարուցենք որոշ երկիրներու հետ, երբ անոնք իմանան մեր հաւաքածոններուն բովանդակութեան մասին: Ժամանակն է ասիկա դարձնելու: Մենք այլեւս չենք կրնար մեր պահարաններուն մէջ դիակներով ապրիլ»:

Այժմ, երբ հայերը իմացած են Ֆրանսայի թանգարանին մէջ պահուող Հայոց Յեղասպանութեան հինգ գոհերու գանկերուն մասին, կ'առաջարկեմ Հայաստանի կառավարութեան, որ Փարիզի մէջ իր դեսպանատան միջոցով անյապաղ խնդրանքով մը դիմէ այս գանկերը Հայաստան վերադարձնելու համար, որպէսզի անոնք իրենց վերջին հանգրուանը գտնեն Երեւանի մէջ, Հայոց Յեղասպանութեան յուշահամալիրին մօտերը: Այս գոհերը արժանի են պատշաճ յուղարկւորութեան՝ մէկ դար արկղերու մէջ, ֆրանսական թանգարանին նկուղը պահուելէ ետք:

**Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան**



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեկնելով այժմու տնտեսական պայմաններէն, Բերիոյ Հայոց Թեմի Ընկ. Ծառայութեան խորհուրդը կը շարունակէ իրեն վստահուած մարդասիրական, բարեսիրական եւ բժշկական օժանդակութեան առաքելութիւնը:

Առ այդ, կը տեղեկացնենք գաղութիս Հայ Առաքելական Ժողովուրդի գաւակները, թէ անոնք որոնք կարիքը ունին. -

Քայլակներու walker

Ձեռնափայտ-յենակներու عكازة صرفيقية

Անբացուած-յենակներու عكازة ايطالية

Օդային-փչովի ներքնակ սպունգներու فرشمة هوائية

կրնան ներկայանալ Ազգային Առաջնորդարանի Ընկ. Ծառայութեան Խորհուրդի գրասենեակ, կամ հեռաձայնել հետեւեալ թիւին (2122758):

Բերիոյ Հայոց Թեմի Ընկ. Ծառայութեան Խորհուրդ

Թուրքիոյ նուրջ

ՉԱՌԵՑՈՂՈՒՆ ԿՐԿԻՆ ՀԱՍՏԱՏԱԾ Է ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՅԻ ԿԱՍԵԱԼ ԸԼԱԸ ՀԱՅ-ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆԵՆ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուր Չաուուշօղլու Անգարայի մէջ տեղի ունեցած «Թուրքիոյ Նախաձեռնողական եւ Մարդասիրական Արտաքին Զարգացականութիւնը» խորագիրով համաժողովի իր ելոյթին կրկին անդրադարձած է Հայաստանի Հանրապետութեան հետ տարուող գործընթացներուն:



Այս առումով ան նախ խօսած է Կովկասով անցնելիք Միջին Միջանցքի մասին՝ Հայաստանին «խորհուրդ տալով» խելացի գործել եւ նոյնպէս օգտուիլ այդ ճամբաներէն: Այս Չաուուշօղլու անմիջապէս անցում կատարած է Թուրքիոյ ու Ատրպէյճանի՝ «Հայաստանին խաղաղութեան ձեռք մեկնելու» թեզին՝ կրկին իրար կապելով հայ-թրքական ու հայ-ատրպէյճանական գործընթացները:

«...Թուրքիան եւ Ատրպէյճանը խաղաղութեան ձեռք մեկնեցին, Ատրպէյճան համապարփակ խաղաղութեան պայմանագրի առաջարկով հանդէս եկաւ, բանակցութիւնները պետք է կեդրոնացած ըլլան արդիւնքի վրայ»:

Մենք ալ կարգ աւորման գործընթաց ունինք (Հայաստանի հետ), սակայն բաւական բնական է այն, որ ատիկա, անշուշտ, յառաջ կը տանին ջան Ատրպէյճանի հետ համակարգումով, ծայրաստիճան բնական է նաեւ այն, որ այդ երկու գործընթացներն ալ կ'ազդեն իրարու վրայ, որքէ մեկն ալ թող ատիկա անընդունելի չհամարէ», ըսած է ան:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Գերշ. Տ. Մակար Եպս. Աջգարեան Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի Հայլէպ, Սուրիա



Սրբազան Հայր, Ուրախութեամբ իմացանք, թէ ընտրուած էք Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ: Կը շնորհաւորենք ձեզ եւ նաեւ Բերիոյ Թեմը Հայլէպ, Լաթաքիա, Բեսապ եւ Ըեզիբէ:

Բերիոյ Թեմը ունի մեծ աւանդ: Կերտած է պատմութիւն վաղ ժամանակներէն սկսած մինչեւ այսօր: Ցեղասպանութենէն ետք այդ դարձ աւ սփիւռքահայութեան կարեւոր կողմնակիցները եղան հայրենիքի արտաքին գտան այստեղ: Հայլէպը եթէ մեկ կողմէ ներսուրիական իմաստով դարձաւ հաստատ կեդրոն, բայց նոյնքան ալ սատարեց սփիւռքահայ կեանքերու կազմաւորումին եւ լիցքաւորեց զանոնք:

Կը հաւատանք սուրիահայ գաղութին բերած Բերիոյ Հայոց Թեմին հոգեւոր, եկեղեցական եւ ազգային կարեւոր նպաստին, նոյնքան ալ համահայկական մասշտապով ունեցած ներդրումին: Այստեղէն նաեւ պիտի տեսնել անհրաժեշտութիւնը գաղութի կեանքին վերաշխուժացման եւ վերակազմակերպումի աշխատանքներուն: Այս իմաստով ձեր ընտրութիւնը իր շատ կարեւոր ներդրումը պիտի ունենայ եկեղեցական, համայնքային եւ գաղութային կեանքի վերակազմակերպումի ջանքերուն մէջ: Ձեր երկար տարիներու հոգեւոր, եկեղեցական եւ ազգային կեանքի փորձը մեծապէս պիտի նպաստէ այս առաքելութեան յաջողութեան:

Աստուծոյ առաջնորդութիւնը կը հայցենք ձեր այս նոր պատասխանատուութեան մէջ եւ կը մաղթենք ձեզի ուժ եւ կորով: Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան անունով եւ անձնապէս խնդրեմ ընդունեցէք մեր ջերմ շնորհաւորութիւնները:

Յարգանքով՝
Դոկտ. Հրայր Ըեպեճեան
Ընդհանուր Զարտուղար
Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութիւն

ՀԱԼԷՊԻ «Ս. ՍԱՅԱԿ...»

Սկիզբ՝ էջ 12

երգեցին «Հիմի Էլ Լուենք» երգը: Անոնք գեղեցկօրէն ներկայացուցին «Ազնուութեան Գնահատանքը» եւ «Ընկերասեր Վարդանը» խորագրերը կրող բարոյալից պատմութիւններ, որոնց բեմականացումը կատարած էր Արթ. Տ. Չարեհ Բիւյ. Շաքարեան:

Վերջին յայտագիրով շրջանաւարտները ներկայացուցին 144-րդ Սաղմուցը, «Աշակերտը Քրիստոսի», «Շնորհեա Մեզ», «Անուշ Սրտով» եւ «Ամէն Հայի»:

Ծնողները հոգեկան ցնծութեամբ կը հետեւէին իրենց զաւակներուն արտասանած արօթներուն եւ երգած շարականներուն, քաջ գիտակցելով, որ Հայ Եկեղեցւոյ յարկէն ներս իրենց ստացած դաստիարակութիւնը իր արդիւնքը պիտի տայ իրենց կեանքէն ներս:

Հոգեւոր գեղարուեստական յայտագրի արտադրող, տեսչութեան խօսքը ուղղեց «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» կիրակնօրեայ դպրոցի ընդհանուր տեսուչ Արթ. Տ. Չարեհ Բիւյ. Շաքարեան: Ան շնորհաւորեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան քրիստոնէական բաժանմունքի անցելի տեսուչ եւ կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տնօրէն, հոգեւոր ապրումներով լեցուն շատ սիրելի նորընտիր Առաջնորդ Սրբազան Հայրը, որուն հանդիսապետութեամբ Թեմէն ներս առաջին պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ: Բախանայ Հայրը շնորհակալութիւն յայտնեց օրուան հանդիսավար օրդ. Սեւան Տէիրմէնճեանին եւ կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմին:

Ան հրաւիրեց երեք Հայր, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աջգարեանը, որպէսզի իր սրտի խօսքը ուղղէ եւ շրջանաւարտներուն

վկայականաց բաշխումը կատարէ:

Սրբազան Հայրը աշակերտներուն ուղղելով իր խօսքը ընթացեց Աստուածաշունչէն հատուածներ, որոնց ընդմէջէն անոնց պատուիրեց, որ արտաքին կիրակնօրեայ դպրոցի կրօնաբարոյական ծրագիրը, պատրաստ ըլլան կատարելու Աստուծոյ խօսքը եւ ծառայելու որպէս ուսուցիչներ եւ ապագայի առաքելներ:

Մակար Սրբազան մաղթեց, որ այսօրուան հանդիսութեամբ նոր էջ մը բացուի աշակերտներուն կեանքին մէջ, պատասխանատուութեան գիտակցութեամբ դիմակայելու իրենց առջեւ ծառայած բոլոր մարտահրաւերները: Ան յիշեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին արտասանած միշտ աշակերտ մնալու խօսքը, թելադրելով աշակերտներուն, որպէսզի շարունակ ընթացելով եւ սորվելով առաւել լուսաւորեն իրենց մտքերն ու հոգիները:

Սրբազան Հայրը գնահատեց կիրակնօրեայ դպրոցի ընդհանուր տեսուչ Բախանայ Հայրը եւ ուսուցչական կազմը՝ իրենց աստուածահաճոյ ծառայութեան համար եւ այս առիթով շնորհաւորեց շրջանաւարտներն ու անոնց ծնողները:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազան Հայր ձեռամբ տեղի ունեցաւ վկայականաց բաշխում: Վկայուցան հետեւեալ տասներկու աշակերտ-աշակերտուհիները:

Նանոր Լախոյեան, Յակոբ Չարշաֆճեան, Արեւ Ստեփան, Սելա Ասթարճեան, Եսթեր Կիւլտալեան, Աննա Մարիա Տաուլէ, Արփի Արապանեան, Ժենի Միսեան, Լեւոն Հայկեան, Յակոբ Շաքարեան, Արագ Շաթոյեան, Անդրանիկ Կիւտալեան:

Հանդէսը իր արտադրող հասարակական Հայր «Պահպանիչ» արօթքով եւ «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ:

ՄԵՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ...

Սկիզբ՝ էջ 12

Նեց հալէպահայութեան ըսելով. «Իրականութեան մէջ այս բեմէն ձեզի համար երգելը այդքան ալ դիւրին չէ, որովհետեւ տարիներ առաջ ես, որպէս պատանի, բարձրացայ այս բեմ, դուք եղաք զիս առաջին լսողները, դուք եղաք ինծի առաջին ծափահարողները եւ դուք եղաք զիս քաջալերողները, որ քայլ առնեմ դէպի երգարուեստի աշխարհ»:

Յ.ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

դականութիւն: Մեզի համար անընդունելի է տեսնել իշխանութիւն մը, որուն համար Արցախը կրնայ ըլլալ գլխացաւանք, որ կը փորձէ ձեռքերը լուսաւ Արցախի անվտանգութեան

Ետքը ան փունջ մը յեղափոխական եւ ազգային երգերով ներկաները ներշնչեց հայրենասիրութեան ջերմ ապրումներով: Երիտասարդներ ու պատանիներ միաձայնութեամբ երգեցին ու եռագոյն դրոշներ բարձրացնելով զարդարեցին ամբողջ սրահը:

Երկու ժամ տեւող այս խանդավառ եւ հայրենաշունչ մթնոլորտը վերջ գտաւ «Արիւնտու Դրօշ» երգով:

Երգահանդէսը փակուեցաւ Հայր Մանուկ Արդ. Պարիխանեանի «Պահպանիչ» արօթքով:

Երաշխաւորը ըլլալու պարտաւորութենէն եւ Արցախի ճակատագիրը կը ձգէ միայն արցախցիին: Արցախը Հայաստան է, բոլորիս երազանքն է, որ անկախութեան հաստատումէն վերջ կը վերամիանայ մայր հայրենիքին», ըսած է Յակոբ Տեր Խաչատուրեան:

Պրիսմակետ

ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ



Մարուշ Երամեան

Աշխարհը պատմութիւններով լեցուն է, պատմութիւններ, որոնք յաճախ դժուար է հաւատալ, ահա թէ ինչո՞ւ անոնք «պատմութիւն» կը կոչուին, աւելի՛ հեքիաթ, այսինքն անիրական, ոչ իրապաշտ, յոյսով լեցուն եւ յաճախ՝ յուսահատութեամբ:

Կար ժամանակ, երբ հրաշքներ կային. ո՞ր գացին, ո՞ր կորուսեցան այդ ամենօրեայ հրաշքները, որոնք հրաշք էին, պարզապէս մեր անցեալին քաղցր յուշերն են, մեր անցեալին մոռցուած ցաւերը եւ չմոռցուող ուրախութիւնները, որոնք յաճախ այնքա՛ն փոքր բաներով կը յայտնուին:

Հեքիաթային քաղաք մը կար, հեքիաթային ոչ միայն իր գեղեցկութեամբ, այլ իր բնակիչներով, որոնք ազնիւ էին, աշխատասեր եւ հիւրասեր, կը սիրէին արժանապատիւ կեանքով ապրիլ, թէեւ այնքան ալ հարուստ չըլլային:

Եւ ինչպէս ամէն գեղեցիկ բան, որ քիչերէ կը գնահատուի, բայց շատ շատեր կը նախանձնանոր, այդպէս եղաւ նաեւ այդ հեքիաթային քաղաքին համար, որ նախ ենթարկուեցաւ երկրաշարժի, յետոյ՝ հրդեհներու, եւ երբ տեսան որ կարելի չէ ծունկի բերել քաղաքն ու բնակիչներուն ազնուութիւնը, պատերազմներ ծագեցան հոն, - կա՞ր ծագեցուցին, կամ ծագեցուեցան բռն, - եւ քաղաքը հիմնայատակ կործանեցին:



Բայց բնակիչներուն եութիւնը կարելի չէր փոխել կամ ի սպառ ջնջել, եւ ճիշդ ատոր համար ալ քաղաքը կրկին անգամ հաստատեց իր հեքիաթային բնոյթը:

Ի՞նչ ուժ էր, որ գանոնք, այդ բնակիչները կը պահէր այդպէս ազնիւ, աշխատասեր եւ արժանապատուութեամբ ապրող. միայն Կաղանդի շքր-շանի՞ր անոնք այդպէս էին, - որովհետեւ հեքիաթին հերոսներն էին, - թէ՞ միշտ այդպէս եղեր էին, նոյնիսկ ամէնէն տաք օրերուն, կամ ամէնէն անջուր եւ անհաց օրերուն:

Կ'երեւի այս է պատճառը, այդ հեքիաթային քաղաքին մէջ ապրած ըլլալու է պատճառը, որ շատ կը սիրեմ հեքիաթներ գրել ու կը կարծեմ թէ, եթէ տարին գոնէ մէկ հեքիաթ գրեմ, հեքիաթները կը փրկուին եւ անոնց հաւատացողներուն կասկածը կը ջքանայ:

Շատ կան, չէ՞, հեքիաթներ գրուած մեծերու համար: Այդպէս էին Զանս Զրիստիան Անտերսընի հեքիաթները, այդպէս էին Կրիմ եղբայրներուն հեքիաթները, բոլորն ալ մեծերու համար, իսկ փոքրերուն... շատ անյարմար պիտի ըլլային, մինչեւ որ մէկը կամ մէկեր փոխեցին դէպքերը եւ պատշաճեցուցին գանոնք փոքրերուն:

Հեքիաթները սակայն մեր մէջ են, մանաւանդ՝ Կաղանդի օրերուն. ուրկէ՞ եկած են, մե՞նք դրած ենք այդ հեքիաթները մեր օրերուն մէջ:

Անշո՞ւշտ մենք, ամանց անդրադառնալու սակայն:

Հիմա ո՞ր են անոնք, այդ հեքիաթները:

Մեր անանդութիւններուն մէջ: Իսկ անանդութիւնները երկու տեսակ են՝ ընդհանրականը, որ մեր ազգին, մեր վայրին - այս պարագային Արեւմտահայաստանի անանդութիւններն են, իսկ երկրորդը՝ մեզմէ իւրաքանչիւրին ընտանեկան անանդութիւնն է, որուն չենք անդրադառնար, բայց որ այնքա՛ն ազդեցութիւն ունեցած է մեր մանկութեան վրայ եւ կը շարունակէ ունենալ մեր գաւակներուն եւ թոռներուն վրայ:

Ճտողքիս տունը փաշա մանդալ մը կար, որ դէր չուներ, պարզապէս անկիւն մը դրուէր-մոռցուէր էր. իր այդ մոռցուած գոյութիւնը շարունակեց նաեւ ի՛մ տանս մէջ. յետոյ գայն ձեռնը հանեցի, ուր անելի մոռցուեցաւ, մինչեւ որ օր մը որոշեցի վար բերել գայն Կաղանդին ծառին եւ գարդարանքներուն հետ եւ օգտագործել՝ մէջը շիշ մը գինի եւ շուրջը նշեղէնով լեցուն փոքրիկ տոպրակներ դնելով:

Տոպրակները մայրս կարեց-պատրաստեց: Այնքան ընդունելութիւն գտաւ նշեղէնի այդ հսկայ ամանը, որ գաւակներս որոշեցին.

-Տարի մը ես կը լեցնեմ եւ Լարային տունը կը տանիմ, յաջորդ տարին ի՛նք կը լեցնեմ եւ իմ տունս կը բերեմ, - ըսաւ Արան:

Յետոյ կեսուրս տեսաւ որ թոռները որքա՛ն կը սիրէին այդ մանդալը, իր ունեցածն ալ տուաւ մեզի: Տոցս ուրախութիւնը անսահման էր, հիմա երկուքն ալ ունէին իրենց փաշա մանդալները:

Այլ անանդութիւն-ուրախութիւն մըն էր ծառին գարդըրը պատրաստելը:

ՍԼՍԸ

ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ «ՅՊԱՐՏԱՌԻԹ» ՆՈՒԱՃՈՒՄ ՄԸ ԵՄ



Ս. Մսիսերեան

Յայժողովուրդ, իմացի՛ր. Երեւանի իշխանութիւնները դիւանագիտական նորագոյն ու հպարտառիթ նուաճում մը արձանագրեցին Հինգ-շաբթի, 1 Դեկտեմբերին: Մինչ ֆուտպոլի խումբեր ազնիւ մրցակցութեան մէջ էին Զաթարի մէջ, մէկը մէկու բերդերը խորտակելու համար, Յայաստան նուաճեց Յունգարիոյ բերդը եւ որոշեց դիւանագիտական յարաբերութիւնները վերահաստատել Պուտինի հետ:

Այս նուաճումին հերոսը նոյնինքն արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանն է, Փաշինեան կառավարութեան «աստղերէն» մէկը: Ան Լեհաստանի մէջ, ԵԱՀԿ-ի խորհրդաժողովին ընկիւններուն մէջ հանդիպում ունեցած է իր հունգար պաշտօնակիցին հետ եւ միասնաբար որոշած են ամեն յարաբերութեանց վերահաստատման քայլը: Այս հանդիպումը անելի՛ ծակը կշռեց բաղադրամբ այն հանդիպումին, որ Միրզոյեան ունեցած է ազերի իր պաշտօնակիցին հետ, «ուղի վրայ», ինչպէս հաղորդուեցաւ հպանցիկ լրատուութեամբ մը: (Իսկ Լաւրովի այն յայտարարութիւնը, թէ Փաշինեան պաշտօնա-

բարելաւել միայն ու միայն նիւթական շահերու դիտանկիւնէն, մինչեւ իսկ եթէ այդ շահերը... Յայաստանին ոչ մէկ շահ ապահովեն, անելի՛ մեր հողերէն նոր նուերներ բաժին հանեն ցեղասպան Թուրքիոյ հովանաւորեալին՝ Ատրպէյճանին:

Վերադառնանք «նախաճաշակ»-ին եւ յիշեցնենք, որ Յայաստան Յունգարիոյ հետ խզման գացած էր 10 տարի առաջ, երբ Պութինի իշխանութիւնը Ատրպէյճանին յանձնած էր Սաֆարով անուով ոճրագործ մը. եթէ յիշողութեան կորուստ տառապողներ կան (եւ սա նորաձեւութիւն է հայութեան իշխանաւեր հատուածին մէջ), Սաֆարով այն գինուորականն էր, որ 2004-ին, գիշեր մը Յունգարիոյ մէջ կացնահար սպանած էր հայ սպայ մը, դատուած, դատապարտուած էր Յունգարիոյ մէջ, որ սակայն քանի մը տարի ետք, ոճրագործը յանձնուած էր Ատրպէյճանի իշխանութիւններուն (ըստ որոշ տեղեկութիւններու՝ գանձելով հսկայական գումարներ), իսկ Սաֆարով իր երկիրը վերադարձած էր իբրեւ ազգային հերոս, անոր հայասպան արարքը ներկայացուած էր իբրեւ օրինակելի սխրանք: (Չէ՞ որ Թալէթներն ալ Թուրքիոյ մէջ փառքով դուրս բերուած են պատմութեան աղբաւոցէն, իսկ Երեւան աչքերը տնկած է Թուրքիոյ հետ նոր դարաշրջանի մը բացման):



պէս ընդունած է Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ տեսնելու ընտրանքը՝ արդէն դիւանագիտական «շնորհի՛ հարուած» մըն է... Արցախի կռակէն:

Միրզոյեանի քայլը «դիւանագիտական վարպետութեան» նորագոյն վկայութիւն մըն է, նաեւ փաստ՝ թէ Յայաստանի իշխանութիւնները որքա՛ն նախանձնախորհրէն հայութեան շահերու պաշտպանութեամբ: Սա նաեւ նախաճաշակ մըն է այն «տեսութիւններուն», որոնք հայութեան կը ներարկուին մերթ օրէն յիշուելու, երբեմն ալ Եւրոպական համայնքէն, թէ՛ այսօրուան աշխարհին մէջ, Յայաստանը չի կրնար, ու պետք չէ պատանդ մնայ պատմութեան եկած կարծրատիպերու, հոգ չէ թէ այդ «կարծրատիպերը» կապ ունին մեր ամէնէն եական պահանջներուն, իրաւունքներուն եւ հետապնդած նպատակներուն հետ: Խօսքը կը վերաբերի, անշուշտ, կրկին ու կրկին հնչող այն խրատներուն, թէ պետք է յետին բեմ դրկել Յեղասպանութիւնը, դրացիներուն հետ յարաբերութիւնները

կայացուած էր իբրեւ օրինակելի սխրանք: (Չէ՞ որ Թալէթներն ալ Թուրքիոյ մէջ փառքով դուրս բերուած են պատմութեան աղբաւոցէն, իսկ Երեւան աչքերը տնկած է Թուրքիոյ հետ նոր դարաշրջանի մը բացման):

Եթէ հիմա Երեւանի իշխանութիւններուն հարց տանք, թէ յարաբերութեանց վերահաստատման առիթով, Յունգարիա արդեօք իր յանցապարտ արարքին համար ներողութիւն խնդրա՞ծ է Յայաստանէն ու սպանեալ գինուորին ընտանիքէն, եւ եթէ ոչ՝ մեր ժողովուրդը պիտի ներե՞՞ ձեր այս «դիւանագիտական վարպետութիւնը»՝ անոնք հաւանաբար պատասխանեն. «Կ'արժէ՞ 18 տարի առաջ սպանուած մէկ գինուորի համար խզուած մնալ Յունգարիոյ հետ: Չէ՞ որ խզումը տեղի ունեցած է չարագործ նախկիններուն օրով, չէ՞ որ 44-օրեայ պատերազմին տուինք շուրջ հինգ հազար զոհ, ազերիներուն նուիրեցինք Արցախի մեծագոյն բաժինը, մեր ժողովուրդը կ'լլեց այդ բոլորը, դարձեալ իր քուէն տուաւ մեզի, ունինք երկաթ, պողպատ՝ մանտաթ: Վաղը Յեղասպանութեան գծով պահանջատիրութիւնն ալ դուրս կը նետենք օրակարգէն եւ մարդիկ դարձեալ կույ կու տան մեր դեղահատը, որովհետեւ կը տեսնեն, որ մենք խաղաղութեան դրօշակիրներն ենք, խաղաղութեան եւ բարօրութեան դա-

ՊՁՏԻԿ ՄՏԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ



Գեորգ Պետիկյան

Ընդհանրապես աշխարհի բոլոր քաղաքները օժտուած կ'ըլլան մեծ ու փոքր պարտեզներով, որոնք անկասկած մեծ գոհունակութիւն կը պատճառեն բնակիչներուն: Ամերիկայի ամբողջ տարածքին կը հանդիպինք նման պարտեզներու կամ պարտիզակներու, որոնց «բարք» անունը կը տրուի:

Հոս է, որ քաղաքացին առանձին կամ իր ընտանիքի անդամներով, շաբթուան ընթացքին կամ շաբաթավերջին, կէսօրէ առաջ կամ մայրամուտին, նոյնիսկ երեկոյեան՝ օրուան կլիմային համաձայն «բարք» կու գայ ու իբրեւ զբօսավայր իր ժամանակը կ'անցնէ իր գաւակներուն, շան եւ կամ իր գընդակին հետ խաղալով, երբեմն միայն ուտելով կամ ալ մարզական գանձան խաղեր խաղալով՝ յատկապէս «պէյսօլ» կամ «ֆութբօլ»:

Նման տեսարաններու հազուադէպօրէն միայն կրնանք հանդիպիլ Թաիֆորիոյ հայահոծ քաղաքներէն ներս:

Ինչո՞ւ: Որովհետեւ, պատճառը շատ յստակ է: Բոլոր այդ «բարք»երը ունին իրենց մնայուն յաճախորդները կամ այցելուները: Բոլորն ալ ան-



խտի ջախջախիչ տոկոսով «գրաւուած» կ'ըլլան հայ տարեց այրերով եւ կիներով, որոնք նոյնիսկ առաւօտ կանուխ իրենց աղմուկով կը խճողեն քաղաքամէջի փոքր այդ մարզադաշտերը:

Պարզ այցելութիւն մը, արդէն բաւարար է այս իրականութեան հետ դէմ հանդիման գտնուելու: Ու հետաքրքրեալն է, որ նոյն այդ մարդիկը, ամէն օր գրեթէ նոյն ժամուն, նոյն տափատով եւ կամ բաճկոնակով, մէկ թելին տակ բազմոց մը կամ աթոռ մը շալկած, միւսին՝ նարտին կամ «թաւլուն», իսկ գրպանն ալ լման հաց մը, կամ քանի մը պանսն ու քանի տուփ սիկարէթ եւ թղթախաղ, կը փութան իրենց սիրելի այս ժամադրավայրը:

Ասոնք, «անկախ» մարդիկ են, իսկ իրենց մտածելակերպով ալ՝ իւրայատուկ: Ամէն առաւօտ կու գան նոյն վայրը, կը նստին իրենց սովորական տեղը՝ քարաշէն սեղանի մը շուրջ: Իրենց հարազատ բարբառով կը բարեւեն ընկերակիցը կամ հայրենակիցը եւ ապա իրենց հետ բերած բազմոցին վրայ նստելով, անհամբեր կը սպասեն մնացեալ խաղընկերներուն: Բարեբախտաբար բոլորն ալ ճշդապահ են:

Ժամը տասը եւ քիչ մը ավելի՝ արդէն «բարք»-ը հայու աղմուկով լեցուած կ'ըլլայ: Կը սկսին խաղերը, ամէնօրեայ «մրցախաղերը», բարձրաձայն ու նոյնքան խանդավառ: Ծատեր կը խաղան, ուրիշներ հեռուէն կը դիտեն այս խաղացողները եւ կը կատարեն իրենց ճշդումներն ու դիտողութիւնները: Իսկ շատերն ալ կարգ կը սպասեն ու միջոցին իրարու հետ շաղակերպով ժամանակ կ'անցնեն: «Թաւլու» եւ կամ թղթի խաղացած ժամանակ, գրեթէ բոլորն ալ քաղաքականութեամբ կը զբաղին: Իրենց օրուան ժամերը խաղի կողքին այս հարցերով ալ կը հիւսուին: Հոս է, որ իրենք կը լուծեն աշխարհի բոլոր խնդիրները, ազգայինէն մինչեւ միջազգայինը, իրենց մատներուն մէջ խաղցող թուղթին, համրիչին կամ «գարի» հատիկներուն հետ:

Իրենց կարգին, հայ տարեց կիներն ալ մէկ կողմ հաւաքուած, քաշուած, իրենց հետ բերած աթոռներուն եւ կամ արեւտ ու տաք օրերուն կանաչ խոտին վրայ փռած կարպետին վրայ նստած, ձեւով մը խմբուած, շատ յաճախ իրենց թոռնիկը կամ թոռները բերելով, «կը խաղցնեն», միաժամանակ ձեռագործ աշխատելով եւ կամ շատախօսելով կը զբաղուին:

«Այսինչը... մեռած է. կամ «տիվորս» եղած է, եւ կամ թոռնիկ մը ունեցած է: Աւելին, օր մը առաջ բանտ մտած է եւ կամ ալ կինը ծեծած է»: Տակաւին ասոնց վրայ նաեւ պէտք է ավելցնել օրուան վարունգին կամ լուրիկին անհամ կամ սուղ ըլլալը, հացին չոր կամ թարմ վիճակը եւ նոր շուկայ իջած ծիրանին գինը եւ կամ գետնախնձորին կամ տիսին լաւ արժէքը:

Այս վայրերուն մէջ օտարներ չկան: Չեն հանդիպիր: Օտար մարդ չէ տեսներ: Հայերը արդէն «գրաւած են» ամբողջ «բարքը»: Մէկ խօսքով բացօթեայ սրահ, կամ ակումբ, եւ կամ հայկական ամէնօրեայ անկանոն եւ

աղմուկ համախմբում:

Բոլոր այցելուներուն համար «բարքը» կարելի չէ ուրիշ «բանով» մը փոխարինել: Հոս ամէն բան կայ: Արդէն ամէն մարդ իր հետ բերած է իր շուրն ու յատկապէս իր սիկարէթը, կուտն ու պիստակը եւ նոյնիսկ իրենց ձեռքերով իսկ պատրաստուած սանտուիչը: Լուսացարան, քարէ, փայտէ կամ տախտակէ նստարան... ուզածդ կայ: Իրենց տունէն ավելի հանգիստ: Նախ հրամայող չունին եւ ոչ ալ իրենց շարժումներուն հետեւող հարսի եւ կամ կնոջ աչքեր: Հեռաձայն նոյնիսկ չեն պտտցներ: Ոչ թէ որովհետեւ անոր գործածութիւնը չեն գիտեր, այլ անոր կարիքը նոյնիսկ չկայ. արդէն իրենց բնակարանէն քանի մը թաղ անդին կը գտնուին:

Այսպէս, խաղի միջոցին կը խօսին, կը խնդան, կը կատակեն նոյնիսկ կը հայհոյեն, գիրար կը քաջալերեն կամ կը մխիթարեն, առանց մոռնալու անցեալը վկայութեան բերելու: Անցեալ մը, որուն մէջ գլխաւոր հերոսը միշտ իրենք եղած են: Այս բոլոր այցելուները, ի վերջոյ գրեթէ իրարու տարեկիցներ են, թերեւս իրարմէ քանի տարիներու տարբերութեամբ: Բայց այս տարեց «հերոսները», ինծի համար ուրախ մարդիկ են, որովհետեւ իրենց այս տարիքին, իրենք գիրքը զբաղեցնելու լաւագոյն ձեւը գտած են արդէն, այս հսկայ հայու «ձուլարան» նկատուած երկրէն ներս:

Մէկ խօսքով, իրենց կեանքի մնացեալ տարիները հաճոյքով լեցնելու գաղտնիքը գտած են:

Հետաքրքրեալն է դիտել այս բոլորը: Ու ամէն անգամ, երբ այդ «բարք»երուն մօտէն անցնիմ, յանկարծ բան մը, տրամադրութիւնս կը խանգարէ: Մտքիս մէջ անակնկալ հարցում մը, փոքր կամ պզտիկ մտահոգութիւն մը կը բերէ իր հետ, որ անժամանակ գիտ կը նետ տարբեր մտմտուքի մը մէջ:

Հապա՞ ես: Հապա՞ մենք: Հապա՞ իմ տարեկիցներս: Եթէ նախախնամութիւնը մեզի ալ երկար կեանք պարգեւէ ու հասցնէ այս մարդոց տարիքին, արդէն մենք ի՞նչ պիտի ընենք: Մեր այդ տարիքին ինչպէ՞ս եւ ինչո՞վ պիտի պարապինք: Օրուան մեր ժամերը ինչպէ՞ս պիտի վատնենք:

Ահա այս եւ նման հարցումներ են, որոնք կը խճողեն միտքս ու յաճախ նայուածքս կը պղտորեն: Հաւանաբար մեզմէ շատեր ներկայիս համակարգիչը դարձուցած են իրենց ամէնօրեայ ընկերն ու զբաղումը: Արդե՞օք իբրեւ զբաղում «թաւլու»-ի կամ թղթախաղի տեղ իրենց համակարգիչներով «բարք» պիտի երթան, թէ ոչ, տունը պիտի նստին ու իրենց տարիքին ծանրութեան տակ կը քած, թի-վիին առջեւ գամուած, մինչեւ վերջ կամ պիտի կարդան եւ կամ ալ պիտի քնանան: Չեմ գիտեր, որովհետեւ բախտագուշակ մը չեմ: Դժուար է նման բան գուշակել: Բայց լաւ բան է գիտնալը:

Եւ տակաւին միտքս իր թռիչքներով գիտ կը տանի դէպի մեզմէ քանի մը սերունդներ վերջ եկողներուն մասին: Արդե՞օք անոնց «բարքը» ի՞նչ պիտի ըլլայ: Էլեքտրոնիկ խաղերը, «այ բատերը» կամ «այ ֆօսները» պիտի փոխարինեն «թաւլուն» կամ նարտին...: Չեմ գիտեր ըսի: Խելքս, ասկէ ավելի չի կրնար այս հարցը «լուծել»:

Հապա դո՞ւն, յարգելի՛ ընթերցող, դո՞ւն ի՞նչ կը մտածես: Ո՞ր կը մտածես անցնել յոգնած տարիքիդ օրերը: Արդե՞օք մտածած ես այս մասին: Բայց... ավելի լաւ է, որ չմտածես, որովհետեւ կրնայ ըլլալ, որ քունդ ալ «փախցնես»:

ԴԻՄՆԱԳԻՏԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 7

րաշրջան կը հետապնդենք ամէն գնով: Կացինահար սպայի մը կամ բազմահազար զինուորներու մահը ի՞նչ արժէք ունի մեր այս նպատակներուն դիտանկիւնէն: Թուրքիա եւ Ատրպէյճան մեզմէ որակական նշաններ կը սպասեն խաղաղութեան դարաշրջանը բանալու համար, հոգ չէ թէ մենք ալ կը տեսնենք, թէ անոնք Արցախի մէջ նոր ցեղասպանութիւն կը նախապատրաստեն»: (Ավանջը խօսի անմահ Փանջուրիին):

Ժողովուրդը, մինչեւ իսկ այս իշխանութեան քուէ տուող իրաւունք չունի կու տալու նման «վարպետի հարուածներ», որոնք կը մատուցուին մեղրապատ թոյնի ձեւերով: (Մեր խօսքը չի վերաբերիր այն փոքրամասնութեան, որ ուխտած է կոյր ու խուլ ձեւանալ այս իշխանութիւններուն ԲՈԼՈՐ կորստաբեր քայլերուն դիմաց, կը նախընտրէ հայկական հողերը եւ իրաւունքները նոր-նոր կորուստներ, որովհետեւ չէ կըրցած ձեռքազատիլ ստալինեան օրերէն ժառանգուած՝ անծի պաշտամունքի եպերելի ավանդութիւնն):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տիպիւրեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԽԱԺԱԿ ՏԻԼ ՊԵՐԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Դեկտեմբեր 2022-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնապահէն ներս:



«ԵԱՊԱՆՃԱ ՀՈՒՐՐԱՐ»



Սեւան Ա. Մանճիկեան

Եապանճա հուրրսը Բեսապի բարբառով կը նշանակէ օտար հարս: ԶԷ՛- չԷ՛, ձեր միտքը թող շատ հեռու չերթայ: Օտար հարս, որ կ'ըսեն այլ հա- մայնքի, կամ այլ յարանուանութեան եւ այլազգի պատկանող հարս չի նշա- նակեր, այլ կը նշանակէ «ոչ քեսապցի հարս»: Այլ խօսքով՝ այն հարսերը, որոնք ոչ թէ Բեսապէն կամ Բեսապի տասներեք գիւղերէն, այլ ուրիշ քա- դաքներէ կամ գիւղերէ հարս եկած են (Լաթաքիա, Գալէպ, Դամասկոս, Ե- գուպիէ եւ այլ շրջաններ): Անոնք բոլորը «Եապանճա հուրրսը» կը կոչուին:

Յետգիտէ «Եապանճա հուրրսը»-ն դարձաւ «Եապանճո հուրրս»: Աւել- ցնելով ըսեմ, որ նշանակութիւն չունի թէ այդ բոլոր օտար հարսերը որքան երկար ժամանակ կ'ապրին Բեսապ. անոնք ցկեանս «Եապանճա հուրրս»- եր կը մնան ու Բեսապի տեղացիութիւնը չեն կրնար ստանալ:

Այդ հարսերը ինչպէ՞ս կրնան տեղացիութիւն ստանալ, երբ Բեսապի, բարբառին տիրապետելը բաւարար չէ, անոր հնչիւնները ճիշդ ձեւով ար- տասանելի է հնարքը, սկսած «հուրրս»-ը (հարսը) բառէն, անցնելով «հուր- վը» (հաւը), «շուվուկկիցով» (գլխի վար եկաւ) եւ «հաւկոյթը» (հաւկիթը) ու դեռ շատ ու շատ բառերով հարուստ բարբառ մը, որուն բառերու ճիշդ հըն- չիւնները արտասանելը մարդ միայն մօր կաթին հետ կրնայ ըմբռնել, ըն- կալել ու սորվիլ: Ու դեռ սորվիլը մէկ կողմ, այդ բարբառը նոր սերունդին փոխանցելու պարտականութիւնը դիւրին գործ չէ:



Հապա Բեսապի հարուստ խոհանոցը՝ իր համեղ ճաշերով, անուշե- դէնով (յատկապէս բախլաւայով) եւ պաշարով: Այդ բոլորը պատրաստելու արուեստը իմանալն ու կիրարկելը, ապա հաճոյքով ճաշակելը տարբեր բա- ներ են: Բեսապի խոհանոցի բուրբի գագաթին վրայ կը բազմին «Քիկիէրը» (ձէթով հացը) ու թոնկի հացը չորթանով պատրաստուած կամ «ճֆթով» հա- ցը (ձիթապտուղով) պատրաստուած, որոնք թոնկիներէն բուրած հոտը ան- դիմադրելի է: Հապա «թիխանան» (մածունով եփած ու չորցած ցորեն), «քիշ- քէկը» (գետնախնձորով պատրաստուած քիւֆթա), «թըթուն գլորը» (ոսպով պատրաստուած յատուկ ճաշ) եւ շատ ու շատ ճաշեր: Այդ բոլոր ճաշերն ու անուշեղենները յիշելու համար Բեսապի ճաշերու յատուկ հատորի մը կա- րիքը կը ստեղծուի: Բեսապի հարուստ խոհանոցի հմտութիւնները ձեռք ձգե- լը՝ ոչինչ է, այդ բոլորը նոր սերունդին փոխանցելու գործը, սակայն, տար- բեր բան է:

Իսկ Բեսապի երգն ու պարը այլ պատմութիւն են: Բեսապի բարբառին տիրապետելը տեղ, Բեսապի բարբառով երգուած երգերը սորվիլ ու երգել ինքնին հնարք է: «Կերմեր ֆայթան հեգեուօժ ի» (կարմիր հագուստ հագած է) եւ անոր խաղիքները եւ «Աման իշգէն» (աման աղջիկ) ու դեռ շատ-շատ երգեր: Այս երգերը սորվիլ ու երգելու կողքին, Բեսապի յատուկ պարերը պարելը մեծ խանդավառութիւն կը ստեղծեն տարբեր առիթներով:

Երգի ու պարի անբաժանելի մէկ մասնիկն են՝ տիոլն ու գուռնան: Անոնք ձայնը լսել ու շարունակել նստած մնալը դժուար է: Սակայն այդ բոլորը սորվիլը՝ ոչինչ. կը մնայ այդ երգերն ու պարերը նոր սերունդին փոխանցե- լով:

Ու դեռ ինչպէ՞ս իմանալ թէ.
- Հաւերը ձմրան եղանակի նախօրեակէն սկսած «կը փիտըրփիլիսն» (փետուրները կը փոխեն) ու այդ շրջանին հաւկիթ չեն ածեր:

- «Հելիթէն կրեճը» Բեսապի բարբառով (գուռ) կը նշանակէ, իսկ «սունտը» (ցորեն ծեծելու քարէ սարք) եւ շատ ու շատ գործիքներ ու առարկաներ:

- Բեսապի բարբառով ըսուած առածները հարկ է հասկնալ ու սորվիլ: Օրինակ «հիի նըգըր ըղտէն պոռնկը իննա» (սպասե՛ միւսը ուղտին պոռն- կը իյնայ):

Այս բոլորը իմանալը՝ ոչինչ, սակայն այս բոլորը նոր սերունդին փո- խանցելը այլ բան է:

Ու դեռ ո՞ր մէկը թուեմ, ո՞ր մէկը գանց առնեմ: Ամբողջ կեանք մը ինչ-



ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

ՊԱՏԱՆԻՆԵՐԸ



Արինա Պօշկեգէնեան

Պատանին մէջ նստած էինք, դուռը թակելով ներս մտան, ինծի հա- մար դէմքով ծանօթ, հանգամանքով երեք անձեր:

Նպատակով մը եկած էին: Բաւական հայրենասիրութեան մասին խօ- սելէ ետք, վերջապէս փոխանցեցին կեանքիս սպասուած երագային լուրը, որ պիտի առաջնորդէր զիս մտնել այն յատուկ դուռը՝ Սուրբիոյ Պատանե- կան Միութեան շարքեր:

Փոխանցուած լուրը աննախընթաց ուրախութեամբ պատեց հոգիս: Մանկութեանս, երբ քրոջս հետ կը գրուցէի, ան յաճախ կը պատմէր, որ պատանիները կ'ունենային իրենց տարեկան բանակումը ու անոնց անմո- ճանալի յուշերը ունկընդ- րելով բանակումի մաս- նակցութեան գաղա- փարը գագաթնակետին կը հասցնէին: Բանա- կումի գաղափարը շլա- ցուցած էր զիս, բայց անդամակցելու ետք տեսայ, որ պատանե- կութիւնը աւելի վեհ նպատակներ եւ գաղա- փարներ կը հետապնդէ:



Իբրեւ առաջին կարգ եւ նորեկ անդամագրուած պատանի, ամէն ինչ մեծ ու անհասանելի կը թուէր ինծի: Երբ բարձրագոյն կարգերէն ընկերներ եւ ընկերուհիներ կը դասախօսէին, իրենց գիտելիքներն ու կարողութիւնները կ'ապշեցնէին զիս ու կ'ունենայի այն ցանկութիւնը, որ մենք ալ աւարտական կարգի պատանիներ դառնանք, սորվիմք Հայոց պատմութիւնը, յեղափոխութեան պատմութիւնն ու երգերը, ունենանք հա- մարձակ ու դեկավար ըլլալու կարողութիւնը, ապա մենք ալ մեր հերթին փոխանցենք մեր սորվածները ապագայ սերունդներուն, որպէսզի հայ մարդը եւ հայութիւնը կանգուն մնայ:

Պատանեկան հնգամեայ թանկագին շրջանը անցան ասուպի արա- գութեամբ եւ արդէն դարձանք այդ ցանկալի աւարտական կարգի պատա- նիները, իսկ բանակումի մասնակցելու անցեալի մեր փափաքը կը մնայ սովորական, տարիքային փափաք, սակայն անոր հաճոյքը, դաստիարակ- չական դերը եւ ընկերային մթնոլորտը պատանիներուն սրտերուն մէջ իրենց դրոշմը կը ձգեն: Պատանեկան Միութիւնը մեր մէջ արթնցուց ազգային եւ հայրենասիրական ոգին, զօրացուց նուիրումի եւ զոհողութեան գաղափա- րը եւ նպատակս դարձաւ զօրավիգ ըլլալ մեր դատին, հաւատալով ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ եւ ՄԻԱՅԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ հասնելու մեր նպատակին:

պէ՞ս կարելի է քանի մը էջի մէջ խտացնել:

Այս բոլորը մէկ նժարի մէջ, հողագործութիւնը այլ նժարի մէջ: Բեսապցի- ին գլխաւոր աշխատանքն ու եկամուտի աղբիւրը: Իւրաքանչիւր եղանակ՝ իրեն յատուկ աշխատանքով բնորոշուած: Ծառերը յօտել եւ անոր հուրթօ- տը (ծառերու կտրուած ոստերը) հաւաքել, ծառերը դեղելու աշխատանքը, բերքահաւաքի քաղցր ու սպասուած աշխատանքը եւ անոր յաջորդող խըն- ձորի ու դեղձի դասաւորումը շուկայ ուղարկելու աշխատանքը, ու դեռ շատ ու շատ աշխատանքներ: Հապա պարտեզի մշակուած բանջարեղէնի տե- սակները, որոնք գաւակի մը նման աչքերուդ առջեւ հետզհետէ, պարտեզի ծառերուն նորաբոյս ոստերուն հետ հասակ կ'առնեն ու կը հասունանան: ԶԷ՛, մի՛ փորձէք համոզել թէ այդ բանջարեղէնը եւ շուկայէն բերուած բանջարե- դէնը նոյն համն ու հոտը ունին:

Տան մէջ, հարուստ հողին բարիքները անթուելի են: Պարտեզէն լեցուն կողովով վերադարձը, ինչ որ ըլլայ անոր բովանդակութիւնը, ճակտի քըր- տիկնքով վաստկած աշխատանքի արդիւնքը, սրտի հրճուանք ու հոգեկան բաւարարութիւն կ'առթեն:

Այդ հրճուանքը պէտք է ապրած ըլլաս, որպէսզի իմանաս, թէ ի՞նչ կը նշանակեն այդ բոլորը:

Ի վերջոյ արդար ըլլալու համար պէտք է ըսել, որ երբեմն «Եապանճա հուրրս»-երը վերոյիշեալ թուարկուածներէն մի քանին սորված ու անոնց վարժուած կ'ըլլան. ճաշերու, անուշեղէնի անուններ աղաւաղուած հնչիւն- ներով, սակայն Բեսապի բարբառով արտասանել, երգել ու պարել, բայց երբեք կարելի չէ այս բոլորը միասին իւրացնել: Կրկին պէտք է խոստովա- նիլ, որ կեանքի դպրոցը ու անոր սորվեցուցածը անկրկնելի են:

Հիմա դուք ըսե՛ք՝ եկուոր հարսերը «Եապանճա հուրրսը» անուանելը արդար՞ է, թէ ոչ...:

Նիւթի հեղինակ՝ Մանճիկունց (Մանճիկեաններու) «Եապանճա հուրր- սը»:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Ձեր սիրային կապերը պիտի ամրապնդուին այս շաբաթ: Պետք է այս ջերմ ու վստահելի յարաբերությունները պահպանեք, ներկայացած խնդիրները լուծելու համար:



Ցուլ

Նոր գործի մը ձեռնարկելու բարենպաստ շաբաթ է: Պետք է լսեք ձեր ընկերներուն խրատները, որպեսզի չարեն ձեր բազա առուից:



Երկուորեակ

Բարեկամներու հետ նոր հանդիպում մը պիտի ունենաք, որ պիտի խրախուսեք եւ նոր հորիզոններու առաջնորդէ ձեզ: Բարեյաջող շաբաթ մը կը սպասուի ձեզի:



Խեցգետին

Վերջապես պիտի յաջողիք վերականգնել ձեր առողջական վիճակը: Կարճ հանգիստի մը կարիքը ունիք՝ կազդուրուելու համար:



Առիւծ

Անհրաժեշտ է դիմակայել բացասական խնդիրները: Ձեր անձնական կեանքին մէջ հոգեկան ներդաշնակութիւն մը պիտի տիրէ:



Կոյս

Վերջապես պիտի միանաք ձեր սիրեցեալին: Չգուշացէ՛ք թշնամիներէն, որոնք կ'ուզեն խանգարել ձեր բարեկեցիկ կեանքը:



Կշիռք

Սիրալիր ընտանեկան հաւաք մը պիտի ջերմացնէ ձեզ: Իսկական բարեկամները մեծ հարստութիւն են ձեր կեանքին մէջ:



Կարիճ

Դուք ձեր գործերով պիտի փաստեք ձեզ: Նախանձոտ մարդոցմէ զգուշացէ՛ք, որոնք կ'ուզեն ապականել ձեր երջանկութիւնը:



Աղեղնաւոր

Ճամբորդութեան ծրագիր մը ունիք, որ շուտով պիտի իրականացնէք: Հեռաւոր բարեկամէ մը մեծ նուէր մը պիտի ստանաք:



Այծեղջիւր

Ձեր զգացումներէն առաջնորդուելով յառաջացէ՛ք եւ պիտի յաջողիք: Մօտիկ ազգական մը պիտի օգնէ ձեզի:




Ջրհոս

Բազմաթիւ գործերով ծանրաբեռնուած էք: Ձեր շուրջիններուն փայլուն աստղն էք: Մշտանորոգ գաղափարներով օժտուած էք:



Ձուկ

Օգտուեցէ՛ք ձեր ազատութենէն եւ հաճելի կեանք մը ապրեցէ՛ք: Իմաստուն ծերունիի մը խրատները լսելով յառաջացէ՛ք եւ պիտի յաջողիք:



Շաղիկ Գաբրիէլեան սննդագետ

ՆՈՅՆՄԲԵՐ ԱՄԻՍԸ՝ «ՇԱՔԱՐԱԽՏԻ ՅԱՏՈՒԿ ԱՄԻՍ»

ԻՆչ պետք է ընել արեան մէջ շաքարի տոկոսը նուազելու պարագային: Հետեւիլ 15/15 կանոնին այսինքն՝

1. - Եթէ արեան մէջ շաքարի տոկոսը 50-69 մգ/դլ-է ուտել 15 կրամ պարզ ածխաջուրներ եւ սպասել 15 վայրկեան, եթէ շաքարի տոկոսը 70 մգ/դլ-էն վար մնաց, կրկնել նոյն ձեւը եւ ուտել պարզ ածխաջուրներ, այսինքն շաքարը արագ բարձրացնող ուտելիքներ:

2. - Եթէ արեան մէջ շաքարի տոկոսը 50 մգ/դլ-է, ուտել 30 կրամ պարզ ածխաջուրներ եւ սպասել 15 վայրկեան: Երբ շաքարը բարձրանայ 70-ի ուտել մեծ կամ թեթեւ կերակրաբաժին՝ 1 ժամուան ընթացքին:



6 ՕԳՏԱԿԱՐ ՄԹԵՐԸ՝ ՇԱՔԱՐԱԽՏԵ ՏԱՌԱՊՈՂՆԵՐՈՒՆ

Շաքարախտի պարագային սխալ է վստահիլ միայն ճիշդ սնունդին. արեան մէջ կլուքոզի մակարդակի արդիւնաւետ հսկողութեան համար անհրաժեշտ է նաեւ ֆիզիքայէն աշխոյժ ըլլալ եւ օգտագործել բժիշկին կողմէ նշանակուած դեղորայքը: Սակայն շաքարախտի պարագային սննդականոնը եւս կարեւոր է. որոշ մթերքներ կը բարելաւեն հիւանդին վիճակը եւ կ'օգնեն խուսափելու արեան մէջ կլուքոզի մակարդակի մեծ տատանումներէն:

Լուպիա

Լուպիազիւները կը բարելաւեն արեան կազ-



մը եւ կ'աշխուժացնեն ճարպային նիւթափոխանակութիւնը:

Դդումի սերմեր

Դդումի սերմերուն մէջ կան մեծ քանակով մակ-նիզիում եւ օմեկա-3 ճարպաթթուներ, որոնք կ'արագացնեն «վնասակար» մաղձաճարպի (քոլեստերոլ) եւ աւելորդ շաքարի դուրս բերումը մարմինէն: Հետեւաբար, փափաքելի է դդումի սերմերը աւելցնել ամէնօրեայ սնունդին մէջ՝ չմոռնալով, սակայն, որ անոնք շատ ջերմութ կը պարունակեն. 100 կրամը մօտաւորապէս՝ 450 ջերմութ:

Թեփեր ու ամբողջական հացահատիկային մթերքներ

Ցորենի եւ վարսակի թեփերը, ինչպէս նաեւ ամբողջական հացահատիկային մթերքները կը նպաստեն արեան անոթներու՝ մաղձաճարպէն

ձերբազատման, ինչպէս նաեւ կը կարգաւորեն կլուքոզի մակարդակը արեան մէջ:

Ընկոյզ

Ընկոյզը մեծաքանակ գինք կը պարունակէ, ինչ որ կը նպաստէ արեան մէջ շաքարի մակարդակին նուազեցման: Ընկոյզը հարուստ է նաեւ ճարպաթթուներով, կրածիւնով եւ D կենսանիւթով, որոնք կը պայքարին շաքարի բարձրացման դէմ:

Աւոքասո

Աւոքատոյի օգտագործումը, ըստ մասնագետներու, կ'օգնէ նուազեցնելու կլուքոզի մակարդակը: Բժիշկները շաքարախտով տառապողներուն խորհուրդ կու տան օգտագործել այս պտուղը առնուազն շաբաթը երկու անգամ:

Կասիա

Plant Foods for Human Nutrition ամսաթերթին մէջ հրապարակուած նոր հետազօտութեան մը համաձայն, կասիան 2-րդ տեսակի շաքարախտ ունեցողներուն օգտակար է:



Ան կ'օգնէ պահպանելու արեան մէջ կլուքոզի մակարդակն ու բարձրացնելու ինսիւլինի նկատմամբ զգայունութիւնը:

Տեղին է նշել, սակայն, որ սնունդի մէջ որեւէ փոփոխութիւն հարկ է կատարել բժիշկին հրահանգներով:

(շար. 2 եւ վերջ)

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՔԱԹԱՐ 2022-Ի ԽԱՂԵՐՈՒ Ա. ՓՈԼԻՆ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Քաթարի մեջ ընթացող համաշխարհային ֆուտբոլի 2022-ի մրցումներում առաջին փուլի աւարտին 16 երկիրներ անցան երկրորդ փուլ: Մրցաշարի առաջին փուլին ոչ մեկ երկիր կրցաւ ապահովել ակնկալուող 9 կէտերը: Իւրաքանչիւրը կրեց առնուազն մէկ պարտութիւն: Առաջին փուլի վերջին հանդիպումներուն, Պրագի 1 - 0 արդիւնքով զիջեցաւ Քամերունին, իսկ աշխարհի պիտոյեան Ֆրանսան Նոյն արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Թունուսէն: Չուիցերիոյ կազմը 3 - 2 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Սերպիան: Այս տարեշրջանի անակնկալներէն մէկը եղաւ Գերմանիոյ հաւաքականին հետու մնալը: 4 - 2 արդիւնքով Քոսթարիքային պարտութեան մատնելը բաւարար չէր անոր յաջորդ փուլ անցնելու համար, որովհետեւ Նոյն խմբակին մրցակիցներէն ճափոնը 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Սպանիան եւ երկու կազմերը միասին անցան յաջորդ փուլ:



Արաբական միակ երկիրը, որ կրցաւ իր տեղը գրաւել Բ փուլին եղաւ Մարոքը, որ բացառիկ արդիւնքներով կրցաւ ներկայանալ Նոյն տարեշրջանի մրցումներուն: Ան իր վերջին հանդիպումին 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Քանադան: Անսպասելի արդիւնքներէն մէկը եղաւ Նաեւ պարտութիւնը Փորթուկալին, որ 2 - 1 արդիւնքով զիջեցաւ Զարաւային Բոնիային:

Քաթարի մեջ ընթացող համաշխարհային ֆուտբոլի 2022-ի մրցումներում առաջին փուլի աւարտին 16 երկիրներ անցան երկրորդ փուլ: Մրցաշարի առաջին փուլին ոչ մեկ երկիր կրցաւ ապահովել ակնկալուող 9 կէտերը: Իւրաքանչիւրը կրեց առնուազն մէկ պարտութիւն: Առաջին փուլի վերջին հանդիպումներուն, Պրագի 1 - 0 արդիւնքով զիջեցաւ Քամերունին, իսկ աշխարհի պիտոյեան Ֆրանսան Նոյն արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Թունուսէն: Չուիցերիոյ կազմը 3 - 2 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Սերպիան: Այս տարեշրջանի անակնկալներէն մէկը եղաւ Գերմանիոյ հաւաքականին հետու մնալը: 4 - 2 արդիւնքով Քոսթարիքային պարտութեան մատնելը բաւարար չէր անոր յաջորդ փուլ անցնելու համար, որովհետեւ Նոյն խմբակին մրցակիցներէն ճափոնը 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Սպանիան եւ երկու կազմերը միասին անցան յաջորդ փուլ:

ՖՐԱՆՍԱ ԶԱՍԱԲ ԶԱՌՈՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

Մրցումային 15-րդ օրուան 1/8 եզրափակիչ փուլի հանդիպումին, աշխարհի գործող պիտոյեան Ֆրանսան 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Լեհաստանը եւ իր տեղը գրաւեց 1-4 փուլի խումբերուն մէջ: Մրցումի տեւողութեան, Ֆրանսան ներկայացաւ տպաւորիչ խաղարկութեամբ եւ կրցաւ իշխել դաշտին՝ շնորհիւ իր աստղերուն: Քանի մը վտանգաւոր յարձակումներ ետք, 44 -րդ վայրկեանին, Օլիվէ Ժիթոն կրցաւ ցնցել Լեհաստանի դարպասը: Երկրորդ կիսախաղը ընթացաւ Նոյն կերպով: Փարիզ Սան Ճերմանի աստղ Զիլիան Մպպիէն նմանօրինակ կերպով, երկու առիթներով կրցաւ նշանակել Ֆրանսայի երկրորդ եւ երրորդ կոլերը եւ հինգ կոլերով արժանաւոր դիրք գրաւել մրցաշարի կոլսկորիստներու ցանկին մէջ: Նախքան հանդիպումին աւարտը, Լեւանտովսքի տուգանային հարուածով նշանակեց Լեհաստանի միակ կոլը:



Քաթարի մեջ ընթացող համաշխարհային ֆուտբոլի 2022-ի մրցումներում առաջին փուլի աւարտին 16 երկիրներ անցան երկրորդ փուլ: Մրցաշարի առաջին փուլին ոչ մեկ երկիր կրցաւ ապահովել ակնկալուող 9 կէտերը: Իւրաքանչիւրը կրեց առնուազն մէկ պարտութիւն: Առաջին փուլի վերջին հանդիպումներուն, Պրագի 1 - 0 արդիւնքով զիջեցաւ Քամերունին, իսկ աշխարհի պիտոյեան Ֆրանսան Նոյն արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Թունուսէն: Չուիցերիոյ կազմը 3 - 2 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Սերպիան: Այս տարեշրջանի անակնկալներէն մէկը եղաւ Գերմանիոյ հաւաքականին հետու մնալը: 4 - 2 արդիւնքով Քոսթարիքային պարտութեան մատնելը բաւարար չէր անոր յաջորդ փուլ անցնելու համար, որովհետեւ Նոյն խմբակին մրցակիցներէն ճափոնը 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Սպանիան եւ երկու կազմերը միասին անցան յաջորդ փուլ:

ԼԻՈՆԵԼ ՄԵՍՍԻ ԽԱՂՅԱԲ ԻՐ 1000-ՐԴ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԽԱՂԸ

Ըստ արժանիքի նշանակող լրատուամիջոցներու, 35-ամեայ ֆուտբոլիստ Լիոնել Մեսսիի Աւստրալիոյ հետ խաղը եղաւ իր մարզական կեանքի 1000-րդ պաշտօնական հանդիպումը: Ան նաեւ 100-րդ անգամ է, որ կը ստանձնէ հաւաքականի աւագի պարտականութիւնը: Բացի անկէ, Լիոնել Մեսսի աշխարհի առաջնութիւններուն 8-րդ անգամ ըլլալով ճանչցուեցաւ հանդիպումի լաւագոյն ֆուտբոլիստը:



Նշենք, որ Լիոնել Մեսսի աշխարհի առաջնութիւններուն իր նշանակած ինը կոլերով գերազանցած է իր հայրենակից, լեւնտ Տիեկո Արմանտո Մարատոնան, ինչպէս նաեւ հաւասարած է Ֆրանսացի Զիլիան Մպպիէին:

ԽԱՉԲԱՌ (ՄԽ 418)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Չորիզոնական

- Շահումեանի արժիւր:
- Երեք տարի: Անուղղակի:
- Նետի սուր ծայր: Կանգնիլ:
- Հոս: Հերձակ: Օտար լեզուով՝ այր:
- Միօրինակ, ձանձրացնող:
- Բայական լծորդութիւն: Սողալով մտնել, սպորիլ:
- Երկուքին մէջտեղը:
- Ձայնանիշ: Ռումբեր նետող զինուոր:
- Հակառակ՝ գոյութիւն ունին: Մէկտեղել:
- Երրորդական մայրաքաղաք: Ռամկորէն՝ այր:
- Ճափոնական թատրոն: Տիրան Զրաքեանի ծածկանունը:

Յոգնակերտ մասնիկ:

12. Գիտակցութիւն, արթնութիւն: Իմացութեան եւ ողջախիտութեան աստուածը:


Ուղղահայեաց

- Հայ գուսան: Իգական անուն:
- Տարածքի միաւոր: «Կարմիր Լուրեր Բարեկամաւ» երկին հեղինակը:
- Ախորժելի, հաճոյալի: Ձայնաւոր տառեր:
- Արարած: Հակառակ՝ 460:
- Նոյն սեռի պատկանող: Տանիքի կարկառուն եզերք:
- Հոսում: Իրերայաջորդ տառեր:
- Հինգշաբթի: Երգ: Յետոյ, ապա:
- Ուղղեակ: Հակառակ՝ որթատունկի պտուղ:
- Հակառակ՝ մեղուներու շինած քաղցր կիւթ: Տարուան եղանակներէն (հոլովուած ձեւով):
- Հայկական ազգանուններու վերջավանկը: Փոքրացնող մասնիկ: Անսկիզբ՝ աչքի պտուղ:
- Մակոյկ, նաւակ: Դժոխք:
- Իգական անուն: Լեցուն: Պրկէ՛:

ԽԱՉԲԱՌ (ՄԽ 417)

ԼՈՒԹՈՒՄ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ա	ր	ք	ա	փ	կ	ա	յ	ո	ց	
2	ա	մ	ա	յ	ւ		ա	տ	ն	ա		
3	ն	ո	ր	ո		չ	ա	ր	ւ			
4	գ	ո	ւ	մ	ք	տ	ա	կ	խ	ո		
5	ա	ր	տ	ա		ա	ղ	լ	ո	ւ		
6	ք	ա	տ	ա	տ	ք	ա	կ	յ	մ		
7	կ	տ	ա	կ	տ	կ	ա	ր				
8	մ	ա	ն	ր	ա	ա	տ	ո	ւ			
9	ր	ւ	ա		ւ	մ	ք	ա	ա			
10	ո	ն		ի	լ	ա	ր	կ	կ			
11	ե	ր	կ	տ	ա	ն	ձ	ն	ի			
12	ր					ր	ե	լ	ն	ա		



ՄԵՄ-Ի ԿԱՉՄԱԿԵՐՊԱԾ ԵՐԳԱՆԱԴԵՍԸ ՈՓԵՒՐԵՅՆ ԵՐԿԱՆԵՐԸ

Սուրիոյ Երիտասարդական Միութեան կազմակերպած ձեռնարկները դրական տրամադրութիւն ստեղծելով մէկտեղ դաստիարակիչ դեր ունին: Յատկապէս երգահանդեսները նորահաս սերունդի շրջաններուն վառ կը պահեն ազգային-յեղափոխական երգերը: Այս երգերով հայ պատանին կը ծանօթանայ նաեւ ժողովրդային բանահիւսութեան ընտիր նմուշներուն:

Արդարեւ, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպիսկոպոս Ազգարեանի հովանաւորութեամբ, Սուրիոյ Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 4 Դեկտեմբեր 2022-ին «Գ. Եսայեան» սրահէն ներս, երեկոյեան ժամը 8:00-ին տեղի ունեցաւ յեղափոխական ու ազգային երգերու երգահանդէսը:



Մենակատարն էր նախկին ՍԵՄ-ական Սուրեն Աճեմեան: Ան նուազախումբին ընկերակցութեամբ խանդավառ մթնոլորտ ստեղծեց ու երգեց ազգային ազատագրական պայքարի մեր պատմութիւնը եւ բոլոր ժամանակներու ֆիտայիններուն, հայրենիքի նուիրեալ ասպետներուն սիրանքը պատմող երգեր:



Հանդիսութեան ներկայ էին Հոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեան, ազգային Երեսփոխանական Ժողովի եւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ, բարեսիրական, մշակութային, մարզական միութիւններու ներկայացուցիչներ, Սուրիոյ Երիտասարդական եւ Պատանեկան միութեանց անդամներ եւ ժողովուրդի հոծ բազմութիւն մը:

Բեմավարներ Սագօ Զափրագեան եւ Ժիւլի Արթին քայլերգներէն ետք բաց համարեցին երգահանդէսը, նախ ներկաները հրաւիրելով մէկ վարկեան յոտնկայս լռութեամբ յարգելու Հայաստանի, Արցախի եւ Սուրիոյ Նահատակներուն յիշատակը:



Արարեւն բացման խօսքով Ժիւլի Արթին ներկաները ողջունելէ ետք, յայտնեց նման երգերու կարեւոր դերը մեր պատմութեան ներկայացման մէջ: «Երաժշտութիւնը եղած է կամուրջը մեր պատմութեան էջերուն միջեւ, դարձած է պատմութեան հայելիին: Յեղափոխական ու ազգային երգերով մենք սորված ենք, որ մենք ենք մեր դատին պաշտպանը», ըսաւ ան:



Սագօ Զափրագեան հայերէն բացման խօսքով անդրադարձաւ յեղափոխական երգերու կարեւորութեան՝ հայ հոգիները հայրենասիրութեամբ զինելու առումով: «Անցեալը յիշելու, պատմական յիշողութիւնը վերապրելու եւ միշտ արթուն պահելու յանձնառութիւն ունի հայը: Ազգային եւ յեղափոխական անմահ երգերը սերունդէ սերունդ մեր պատմութիւնը փոխանցելու, հերոսներուն ծանօթացնելու եւ մեր պրոպեգանդային գործիքն են:

Բացման խօսքերէն ետք երգահանդէսը սկիզբ առաւ «Հայոց Մարտիկներ» երգով, ապա երգիչը իր սրտի խօսքը ուղղելով շնորհակալութիւն յայտնելու ու պայքարի ոգին արտայայտելու պարզ ու անկորնչելի միջոցներ եղած են», անցուց ան:



Բացման խօսքերէն ետք երգահանդէսը սկիզբ առաւ «Հայոց Մարտիկներ» երգով, ապա երգիչը իր սրտի խօսքը ուղղելով շնորհակալութիւն յայտնելու ու պայքարի ոգին արտայայտելու պարզ ու անկորնչելի միջոցներ եղած են», անցուց ան:

Մարիան Ասատուրեան
Շար. 12 6

ՀԱԼԷՊԻ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅԻ ՀՈԳԵՒՐ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ

Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցները այն դարբնոցներն են, ուր հայ պատանիները կը ծանօթանան Հայ Եկեղեցւոյ պատմութեան, ծեսերուն, եկեղեցական-ազգային տօներուն, սուրբերու վարքին եւ Աստուածաշունչին: Տարիներու ընթացքին անոնց հոգիներուն մէջ կը սերմանուին քրիստոնեական հաւատքը, ազգային, եկեղեցական եւ մշակութային արժեքներուն նկատմամբ սերն ու կապուածութիւնը:



Հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, նախաձեռնութեամբ Կրօնական Ժողովի, Կիրակի, 4 Դեկտեմբեր 2022-ին, յետմիջօրեի ժամը 5:00-ին, Հալէպի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ներքնասրահէն ներս տեղի ունեցաւ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» կիրակնօրեայ դպրոցի աւարտական կարգի աշակերտներուն հոգեւոր գեղարուեստական հանդէսը եւ վկայականաց բաշխումը:

Սրբազան Հօր կ'ընկերակցէին Հոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Արժ. Տ. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան, Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Չերեքեան, Արժ. Տ. Արշակ Ա. Զինյ. Ալաճաճեան եւ Ազգ. Առաջնորդարանի դիւանապետ Զրիստափոր Հապոյեան:



Հանդէսը սկիզբ առաւ «Տէրունական աղօթք»-ով, «Չգործս Ձեռաց Մերոց» մաղթանքով եւ կիրակնօրեայ դպրոցներու մաղթերով:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» կիրակնօրեայ դպրոցի շրջանաւարտ Արփի Արապանեան: Ան յայտնեց, թէ քրիստոնեական կրօնը մեծ արժեք է մանուկներուն եւ անոր փաստը մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի հետեւեալ խօսքն է. «Չգեղէ՞ք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» (Մր 10.14): Ապա անցուց, որ այս գաղափարին հետեւելով մաս կազմած են կիրակնօրեայ դպրոցի հոգեւոր կառոյցին, ուր ճանչցած են Աստուծոյ ողորմածութիւնն ու գթասրտութիւնը եւ արժեւորած են Աստուծոյ իրենց շնորհած բարիքները:

Շրջանաւարտներուն խօսքը արտասանեց շրջանաւարտ Նանոր Լախոյեան: Ան անդրադառնալով կիրակնօրեայ դպրոցին ներս իրենց բազմաբեղուն գործունեութեան, շնորհակալութիւն յայտնեց կիրակնօրեայ դպրոցի ընդհանուր տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեանին եւ հոգատար

ուսուցիչներուն, որոնք հետեւողականութեամբ ամբողջացուցին կրօնաբարոյական գիտելիքներու ծրագիրը:



Օրուան հանդիսավարն էր կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհի Սեւան Տէրմենճեան:

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» կիրակնօրեայ դպրոցի ընդհ. տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեանի գլխաւորութեամբ, կիրակնօրեայ դպրոցի աւարտական կարգի աշակերտ-աշակերտուհիները հանդէս եկան հոգեւոր գեղարուեստական յայտագիրով: Աշակերտները հոգեպարար կերպով երգեցին երջանկայիշատակ Չարեհ Արք. Ազնաւուրեանի հեղինակած «Ողջոյն» եւ «Բարի Հիշատակ» հոգեւոր երգը: Ասմունքեցին Խաչիկ Դաշտենցի «Հայերէն» բանաստեղծութիւնը:

Անոնց շրթներէն գեղեցկօրէն հնչեցին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ շարականներ, ինչպէս՝ Սրբ. Թարգմանչաց հայրապետներուն նուիրուած «Որք Չարդարեցին» շարականը եւ Սրբոց Վարդանանց նուիրուած «Արեգակն Արդարութեան» շարականը: Ինչպէս նաեւ երգեցին «Լուռ Գիշեր» եւ «Խոր Սուրբին Մէջ» Ս. Ծննդեան երգերը:

Աշակերտները, Հայ Գիրտուն մասին խօսքեր արտասանեցին, ապա

Շար. 12 6